Սերգեյ Դովլաթով

Միայնակների երթը

Անտառահատարան հասնելու համար պետք է շրջանցել նշանավոր օսկինյան ճահիճը: Հետո հատել երկաթգծի գծանցը: Հետո, էլեկտրականի մռայլ մասնաշենքերը շրջանցելով, իջնել սարնիվար: Ու նոր միայն կհայտնվես Չեբյու ավանում:
Ավանի բնակչության կեսը ժամանակավոր գրանցվածներ են՝ նախկին ճամբարականներից: Մարդիկ, որոնց ընկերությունն ու կոիվը չեն տարբերվում իրարից:
Տարիներ շարունակ կրել են իրենց պատիժը: Հետո հագել են քսան տարի շարունակ պահասենյակում փակված քաղաքացիական քրջերը: Ելնում էին դարպասներից՝ թիկունքում թողնելով սողնակի սառը թխկոցը: Եվ այդ ժամանակ միայն պարզվում էր, որ ցանկալի ազատությունն ընդամենը ծանոթ կրկներգ է, ոչ ավելի:
Ազատության մասին էին երազում, երգում էին ու երդվում…
Բայց դուրս եկան, ու հորիզոնից հորիզոն նույն տայգան էր…
Հավանաբար նրանց ավերակել էր ճամբարային օրերի անվերջանալի միապաղաղությունը: Նրանք չէին ուզում փոխել սովորություններն ու վերականգնել կորուսյալ կապերը: Բնակություն հաստատեցին ճամբարների արանքում՝ ժամապահների տեսադաշտում: Պահպանելով, եթե կարելի է այդպես արտահայտվել, մեր պետության գաղափարական հաշվեկշիռը ճամբարային արգելապատի երկու կողմերում:
Նրանք ամուսնանում էին Աստված գիտի ում հետ: Երեխաներին խեղում բանտային իմաստնություններով.
«Մենակ մանր ձկներն են ուռկանն ընկնում…»:

Փաստորեն ավանն ապրում էր ճամբարային օրենսգրքով: Բնակչությունը պարծենում էր գողական վարքուբարքով: Ու ցանկացած ընտանիքի մինչևիսկ երրորդ պորտը մորֆի էր սրսկվում: Ու դրա հետ մեկտեղ՝ ,պլան էին քաշումե և ատում ուղեկցորդային զորքերը:
Եվ չարժեր, որ այստեղ որևէ խմած չեկիստ հայտնվեր: Կարմիրով բոլորակված նրա գլխին անմիջապես ամպեր էին կուտակվում: Թիկունքում շրխկում էին դռները: Դեռ լավ է, եթե մենակ չէր լինում…
Անցյալ տարի երեք սղոցարար գինետնից դուրս քաշեցին մի սփրթնած չեկիստի: Նրա ուսերին փշաքաղվել էին խավոտ թևիկները: Խնդրում էր, համառում, նույնիսկ հրամայում: Բայց այնպես խփեցին, որ գլխարկը թռավ սանդղամուտի տակ: Հետո ,ճոճանակե սարքեցին: Մի տախտակ դրեցին կրծքին ու պայտած սապոգներով քայլեցին վրայով:
Առավոտյան պահեստի աշխատողները հայտնաբերեցին դիակը: Սկզբում մտածեցին՝ հարբած է: Բայց հանկարծ նկատեցին արյան նեղլիկ երիզը, որ բերանից հոսել, թանձրացել էր գլխի տակ:
Հետո ժամանեց զինվորական հետաքննիչը: «Անորսալի վրիժառուները» կինոնկարի ցուցադրումից առաջ խոսեց հարբեցողության վնասների մասին: Իսկ «Սերժանտ Դիմզան ո՞նց, պըրծ ու էդպես էլ անցավ-գնա՞ց» հարցին պատասխանեց.
– Քննությունն, ընկերնե՛ր, միակ ճիշտ ճանապարհի վրա է…
Սղոցարարներն այդպես էլ դուրս պրծան, չնայած Չեբյու ավանում ամեն մի շուն գիտեր նրանց…
Անտառահատարան հասնելու համար պետք է շրջանցել երկաթգիծը: Իսկ մինչ այդ՝ երերուն կամրջակը՝ արևից ճերմակած ջրերի վրայով: Իսկ մինչ այդ՝ Չեբյու ավանը, որ լի է հաշիշի ծխով ու սարսափով:
Ահա նրա դիմանկարը, ավելի ճիշտ՝ լուսանկարը: Ալեբաստրե քնարները՝ ակումբի մեխած դռների գլխին: Քաղցրաբլիթներով ու անուրներով խրկված փոքրիկ կրպակը: Գեղանկար դիագրամները, որ մեզ միս, ձու, բուրդ և այլ ինտիմ բարիքներ են խոստանում: Լեոնիդ Կոստրիցայի ազդագիրը: Ինչ-որ մեռել թե հարբեցող՝ ճամփեզրին:
Եվ այդ ամենի վրա՝ շների հաչոցը, որ խլանում է շրջանակավոր սղոցի մռունչից…
Առջևից գնում էր հրահանգիչ Պախապիլը՝ Հարունի հետ: Ձեռքին բրեզենտե

փոկն էր: Ծխախոտ կպցնելով ու լուցկիները կոտրատելով՝ ինչ-որ բան էր ասում էստոներեն:
Գուստավը բուծարանի բոլոր շներին էստոներեն էր սովորեցրել: Ծնավարները դրանից դժգոհ էին: Բողոքում էին ավագ Եվչենկոյին:
«Նրան հրամայում ես՝ ինձ մո՛տ եկ, իսկ էդ շան ձագը՝ նիխտ ֆըրշտեյն»:
Հրահանգիչն ընդհանրապես քիչ էր խոսում: Եթե խոսում էր, ապա միայն՝ էստոներեն: Ու հիմնականում ոչ թե երկրացիների, այլ՝ Հարունի հետ: Ծունը միշտ նրա կողքին էր:
Պախապիլն ինքնամփոփ մարդ էր: Աշնանը նրա անունով հեռագիր եկավ: Ստորագրել էին զորամասի հրամանատարն ու Նարվայի քաղգործկոմի քարտուղարը:
«Շտապ թոեք՝ գրանցվելու քաղաքացուհի Հիլդա Քոկսի հետ, որը հղիության իններորդ ամսում է»:
Ա՛յ քեզ էստոնացի՝ մտածում էի: Ժամանեց իր Կուռլյանդիայից: Կես տարի լռեց՝ ինչպես Տուրգենևի Գերասիմը: Բոլոր շներին օտար լեզվով հաչել սովորեցրեց: Ու հիմա թոչում է գրանցվելու այդ քաղաքացուհու հետ, որն արձագանքում է Հիլդա Քոկս ցնցող անվանը:
Հենց նույն օրը Գուստավը մեկնեց համընթաց մեքենայով: Հավատարիմ Հարունը մի ամիս կաղկանձում էր բուծարանում:
Վերջապես Պախապիլը վերադարձավ: Օրապահին տալլինյան ,Պրիմաե հյուրասիրեց: Նոփ-նոր ճամպրուկով թոցնելով խատուտիկների գլխիկները՝ մոտեցավ մարմնամարզական զուգափայտերին: Հատ-հատ ձեռք տվեց բոլորիս:
– Ամուսնացա՞ր,- հարցրեց Ֆիդելը:
– Հա՛,- շիկնելով պատասխանեց Գուստավը:
– Հայրի՞կ դարձար:
– Հա՛:
– Անունն ի՞նչ դրեցիր:
Ինձ իսկապես հետաքրքիր էր, թե ինչ անուն են տվել երեխային: Չէ՞ որ նրա մայրիկն արձագանքում էր Հիլդա Քոկս անվանը:
Այ քեզ էստոնացի՝ մտածում էի: Մի տարի ապրեց աշխարհի ծայրին: Փչացրեց բոլոր ուղեկցորդային շներին: Հետո նստում է համընթաց գերանատարն ու մեկնում: Մեկնում է, որ ,համբույրե բացականչությունների տակ համբուրի այդ աներևակայելի Հիլդա Բրաունին: Ավելի ճիշտ՝ Քոկսին:

– Երեխայի անունն ի՞նչ դրեցիք:
Գուստավը նայեց ինձ ու ծխախոտը հանգցրեց ներբանին.
– Սատանա՛ն իմանա…
Ու գնաց շնաբուծարան՝ շատախոսելու իր չորքոտանի համհարզի հետ:
Հիմա նրանք նորից միասին էին: Շունը տիրոջից խոսքասեր էր թվում: Մի անգամ Պախապիլին գիրք կարդալիս տեսա: Կարդում էր լավ տաքացված չորանոցում: Ջինայուղից դեղնած սեղանի մոտ: Մուշտակների համար նախատեսված երկաթե կեռիկների տակ: Հարունը քնել էր նրա ոտքերի մոտ:
Թաթերիս ծայրին մոտեցա: Նայեցի ուսի վրայից: Ռուսերեն գիրք էր: Կարդացի վերնագիրը.
«Աճպարարությունն ակումբային բեմում»…
Առջևից գնում էր Պախապիլը՝ Հարունի հետ: Ձեռքին բրեզենտե փոկն է: Ժամանակ առ ժամանակ դրանով շխկացնում է ճտքին:
Գոտուց կախ՝ ճոճվում է ատրճանակի դատարկ պատյանը: ՏՏ-ն գրպանում է:
Անտառի կողմից ճանապարհը փակում է եֆրեյտոր Պետրովը: Փոքրիկ ու անճարակ՝ Ֆիդելը սայթաքելով քարշ է գալիս ճամփեզրին: Նա առանց անհրաժեշտության հաճախակի իջեցնում է ավտոմատի ապահովիչը: Ֆիդելն այնպիսի տեսք ունի, ասես բռնությամբ կապել են ավտոմատին:
Կալանավորները նրան արհամարհում են: Եվ առիթը եկավ՝ չեն խնայի:
Մի տարի առաջ, Սինդորի մոտ, Ֆիդելն ինչ-որ զանցանքի համար կանգնեցրեց ճամբարականների շարասյունը: Ավտոմատի ապահովիչն իջեցնելով՝ նրանց քշեց սառցասառն գետակի մեջ: Կալանավորները լուռ կանգնել էին՝ հասկանալով, թե որքան վտանգավոր է վաթսունկրականի ԱԿՄ-ն ջղագարի ու վախկոտի ձեռքում:
Ֆիդելը, ավելի ու ավելի տաքանալով, նրանց քառասուն րոպե պահեց ջրի մեջ:
Հետո վերջին շարքերից մեկը կամացուկ նրան մայր հայհոյեց: Շարասյունը ցնցվեց: Առաջին շարքերում երգեցին: Գետի վրա տարածվում էր.

Հնոց բան եմ ձեզ երգում.
Դոնի Ռոստով քաղաքում,
Տղերքի՛ հետ, տղերքի:…
Խելառ էի ու անտուն,
Ու գողացած պիջակով՝

Բռնեցի՞ն ինձ, բռնեցի՞ն…

Ֆիդելն սկսեց ընկրկել: Նա փոքրիկ էր, անճարակ, կոշտուկոպիտ կիսամուշտակի մեջ: Բղավեց. Աչքերը սարսափից ճերմակել էին:
-Կա՛նգ առ, անասուննե՛ր, կսատկացնեմ:
Եվ ահա հայտնվեց ռեցիդիվիստ Կուպցովը (նույն ինքը՝ Կովալ, Անագի-զադե, Գակ, Շալիկով, Ռոժին): Դուրս եկավ առաջին շարքից: Եվ ակնթարթորեն վրա հասած լռության մեջ, հրափողը ձեռքով թեթևակի դեն հրելով՝ ասաց.
– Կրա՞կ ես կտրել: Ես քեզ կմարեմ…
Նրա մատները ճերմակ էին ավտոմատի փողին:
Ֆիդելն իրեն քաշեց ԱԿՄ-ն: Կույր համազարկ տվեց շարքերի գլխավերևով: Ու շարունակ ընկրկում էր, ընկրկում…
Ես այն ժամանակ Կուպցովին տեսա առաջին անգամ: Նրա ձեռքն ինձ նրբագեղ թվաց: Սառնամանիքի օրով բամբակաբաճկոնն արձակված էր, կուրծքը՝ բաց: Կարկամած երգի կողքին լեռնանում էին բառերը.
– Ես քեզ կմարեմ…
Նա քամու դեմ գնացող մարդու պես էր: Ահա քամին նրան ընդմիշտ ախոյան էր ընտրել: Ուր էլ գնար: Ինչ էլ աներ…
Հետո Կուպցովին հաճախ էի տեսնում: Մեկուսարանի մութ ու խոնավ խցում: Անտառահատարանի խարույկի մոտ: Արյան կորստից գունատված: Եվ քամու զորությունն այլևս չէր լքում ինձ…
Առջևում քայլում էր Պախապիլը՝ Հարունի հետ: Բրեզենտե փոկը շխկացնելով՝ նա շանն ինչ-որ բան է ասում էստոներեն: Մայրենի լեզվով հրահանգիչը դիմում է միայն շներին:
Ձախից շարասյունը հսկում է բերդանկային խաչված եֆրեյտոր Պետրովը: Այդ թևի համար կարելի է ապահով լինել: Մարդկանց հայտնի է, թե ինչ է նշանակում նորացված ԱԿ-ն այնպիսի ռազմիկի ձեռքին, ինչպիսին Ֆիդելն է:
Մենք անցնում ենք սառը, նեղլիկ գետակը: Հետևում, որ կալանավորները չթաքնվեն կամրջակների տակ: Բրիգադը հանում ենք գծանց: Կայարանային այրուքի հոտն առնելով՝ հատում ենք երկաթգծի հողաթումբը: Եվ ուղղվում դեպի անտառահատարան:
Այդպես է կոչվում խորհրդանշական, անհաստատուն ցանկապատով շրջափակված անտառամասը: Ծառագագաթների բարձրության վրա ցցված են

դիտաշտարակները:
Պահնորդումն իրականացնում է պահնորդային պահակախումբը:
Պահակախումբը ղեկավարում է սերժանտ Շումեյկոն, որ օրեր շարունակ ձանձրանում է՝ արտակարգ պատահարի սպասելով:
Բրիգադը մտցնում ենք վերահսկվող տեղամաս: Դրանից հետո մեր պարտականությունները փոխվում են:
Պախապիլը կապավոր է դառնում: Նա սեյֆից հանում է Ռ-109-ը: Բացում է բամբուկե կարթի պես ճկուն անտենան: Հետո անծայրածիր եթեր է նետում խորհրդավոր, քնքուշ բառեր.
– Ալո՛, Վա՛րդ, ալո՛, Վա՛րդ: Ես Քաջվարդն եմ: Ես Քաջվարդն եմ: Ձեզ չեմ լսում: Ձեզ չեմ լսում…
Ֆիդելը զզվելի աղմուկով քաշում է անցուղի-միջանցքի ժանգոտած սողնակները: Քարտերն է հաշվում: Վերցնում է զինապահարանի բանալիները: Զննում է ազդանշանային ,Սաթերնե ու ,Շրխկանները: Ձեռք է տալիս՝ լա՞վ է տաքացել վառարանը: Վերածվում է տնտեսական գոտու հսկիչի:
Կալանավորները խարույկ են վառում: Գերանատարների վարորդները վառելիքի հերթ են կանգնում: Աշտարակների վրա ձենձենում են ժամապահները:
Սերժանտ Շումեյկոն, ում անձը առաջին անգամ գնահատեցինք Կոյնոյի տուրուդմփոցից հետո, խաղաղ ննջում է: Չնայած մեր միակ թախտը նախատեսված է հերթափոխից ազատ զինվորի համար:
Տասներկու դիտաշտարակներ հաստատվել են անտառի վրա: Սկսվում է աշխատանքային օրը:
Շուրջը՝ խարույկների ծուխ, շարժիչների հոնդոց, թարմ տաշեղի բույր, ժամապահների փոխկանչեր: Այդ կյանքը դանդաղ լուծվում է սեպտեմբերի գունատ երկնքի մեջ:
Խուլ աղմուկով ընկնում են սոճիները: Քարշակները թփուտները տրորելով՝ դուրս են բերում դրանք: Արեգակը կուրացնող ցոլքերով նստում է մեքենաների լապտերներին: Իսկ անտառահատարանի վրա՝ անհուն եթերում, անաղմուկ թռչում են բառերը.
– Ալո՛, Վա՛րդ: Ալո՛, Վա՛րդ: Ես Քաջվարդն եմ: Ես Քաջվարդն եմ:
Ժամապահներն աշտարակի վրա են: Ազդանշանումը կարգավորված է: Արգելաշերտը հերկված է: Գողերն անցել են աշխատանքի: Ընդունում եմ: Ձեզ չե՞մ լսում: Ձեզ չե՞մ լսում…

Հսկիչն ինձ թողեց զոնա: Հետևիցս տհաճ զնգաց սողնակը: Խարույկի մոտ ուղեկցորդումից ազատված խոհարար Գալիմուլինը լիցքավորում էր չիֆիրբաքը: Չտեսնելու տվի, թեև չիֆիր օգտագործելը խստիվ արգելված է: Ճամբարային հրահանգի համաձայն՝ չիֆիրիստները նույն թմրամոլներն են: Բայց բոլոր բակլանները չիֆիր էին օգտագործում, ու մենք գիտեինք: Նրանց կյանքում չիֆիրը փոխարինում էր կանանց:
Գալիմուլինն աչքով արեց: Ես համոզվեցի, որ ազատամտությունս չափազանց հեռուն է գնացել: Մնում էր միայն սպառնալ խզակոթով: Ի պատասխան՝ Գալիմուլինը կրկին ինձ պարգևեց անհավատի իր ժպիտը: Դիմացի երկու ատամները չկային:
Դեղին կտրվածքով հիանալով՝ անցա հատած ծառաբների մոտով: Ճանապարհ տվի քարշակին, որ աղմուկով փշրտում էր ճյուղերը: Դեմքս սարդոստայնից պաշտպանելով՝ անտառով դուրս եկա գործիքային արհեստանոցի մոտ: Կալանավորները գերան էին գլորում: Հատում էին ոստերը: Լայնաթիկունք, դաշվածքներով պատված ծպեղագործը ճարպկորեն բանացնում էր կարթաձողը:
– Դե՛ հա, գո՛ղ ախպերներ,- կանչում էր նա՝ ափով աչքերին շվաք անելով,- հետ մնացողներին կոմունիզմ չենք տանում: Էդպես էլ կսատկեք հիմիկվա կարգերում…
Ոստ հատողները ցած դրին կացինները, բուշլատները գցեցին խռիվի կուտակի վրա: Ու նորից մետաղը շողաց արևի տակ:
Ես քայլում ու մտածում էի.
«Խանդավառությո՞ն է: Պոռթկո՞ւմ: Դե, իհարկե՝ ոչ: Սովորական մարմնավարժանք է: Պճնամոլություն… Ուժ է, որ հանգիստ կարող է բռնության փոխվել: Միայն թե ազատություն տուր…»:
Ժամապահների հետ մի քանի խոսք փոխանակելով՝ արգելագոտու երկայնքով շրջանցեցի անտառահատարանը: Թմբից թումբ ցատկելով՝ անցա ժանգոտած ճահիճը: Եվ դուրս եկա առավոտվա դժգույն արևից մի փոքր լուսավորված մարգագետինը:
Մեկը՝ թիկունքն ինձ արած, նստել էր ցածրիկ խարույկի մոտ: Կողքին առանց կազմի, հաստափոր գիրք էր: Ձախ ձեռքով տոմատի մածուկով բուտերբրոդ էր բռնել:
– Հա՛, Կուպցո՛վ,- ասացի ես,- էլի՞ քեզ ազատություն ես տվել: Կալանախու՞ց ես

ուզում:
Աշխատանքային աղմուկի արձագանքներով ողողված, խարույկի մոտ՝ կալանավորը նման էր ծովահենի: Թվում էր՝ նրա դիմաց ղեկն է, ու նավը գնում է քամուն ընդառաջ…
…Ձմեռ: Տուգանային մեկուսարան: Երկարուկ ստվերներ՝ սոճիների տակ: Ձյունով ծեփված պատուհաններ: Պատից այն կողմ, ձեռնաշղթաները զնգացնելով, քայլում է Կուպցովը: Կարգագրերի մատյանում գրանցված է. «Հրաժարում»:
Պահարանից հանում եմ նրա անձնական քարտը: Երեսուն բառ, որ պայթյունի են նման. ԱՄԲՎ (Առանց մշտական բնակության վայրի): ԱՄՁ (առանց մշտական զբաղմունքի): ՎՌ (վտանգավոր ռեցիդիվիստ) գրիֆը: Երեսուներկու տարի ճամբարներում: Ուստվիմյան ճամբարակետի հնագույն «օրենքով գողը»: Չորս դատվածություն: Ինը փախուստ: Սկզբունքորեն չի աշխատում…
Ես հարցնում եմ.
– Ինչի՞ չես աշխատում:
Կուպցովը զնգացնում է ձեռնաշղթաները.
– Հանի՛ բիլազուկը, քաղաքացի՛ պետ: Կեղծ ոսկի է:
– Ինչի՞ չես աշխատում, գայլ:
– Օրենքը թույլ չի տալիս:
– Իսկ լափել քո օրենքը թույլ տալի՞ս է:
– Էդ տեսակ օպրենք չկա, որ սոված մնամ:
– Ձեր օրենքն իր դարը ապրել է: Բոլոր ,օրենքներրե վաղուց ծակվել են:
Անտիպովը գործ տվող է: Մամայն առաջին մարդն է քավորի մոտ: Սեղոյը մորֆինիստ է դառել: Տոպչիլային Ռոպչիլայում կապ գցեցին…
– Տոպչիլան մուժիկ էր ու հարիֆ, կանաչ էր, ոնց որ դազի ծերտը: Բա էդ գո՞ղ էր: Էս պառավից հափ կաներ, էն պառավից հափ կաներ, էդ էր դրա բախտը: Դրա համար էլ թախտից գցեցին…
– Իսկ դու՞
– Իսկ ես տոհմիկ ռուսական գող եմ: Գողացել եմ ու պիտի գողանամ…
Դիմացս, փոքրիկ խարույկի մոտ, մարդ է նստած: Կողքին սպիտակին է տալիս գիրքը: Ձախ ձեռքին՝ բրդուճ…
– Ողջո՛ւյն,- ասաց Կուպցովը,- այ, ինքդ դատիր, քաղաքացի՛ պետ: Էստեղ գրված է, որ պառավին սպանել է փողի համար: Հետո էնքան է տանջվել, որ

կամավոր գնացել է տաժանակրության: Իսկ ես, պատկերացրու, մի կլիենտի գիտեի, Թուրքեստանում: Էս կլիենտի վրա երեսուն սպանություն կար ու՝ ոչ մի դատվածություն: Մինչև յոթանասունն ապրեց: Էրեխեք, թոռներ, օր ծերության երաժշտության դասեր էր տալիս… Բայց էդ ի՞նչ, պատմությունը ցույց է տալիս, որ դրանից ուժեղ գործեր էլ են բռնել: Օրինակ, տասը միլիոն կամ ինչքան է էնտեղ՝ գերեզման դնել ու հետո «Հերցեգովինա ֆլոր» ծխել…

– Լսի՛,- ասում եմ,- դու կաշխատես, երդվում եմ: Վաղ թե ուշ կլինես վարորդ, ծպեղագործ կամ գերանավար: Ծայրահեղ դեպքում՝ ոստ հատող: Դու կաշխատես կամ շունչդ կփչես մեկուսարանում: Կաշխատես, խոսք եմ տալիս: Թե չէ կսատկես…

Կալանավորն ինձ զննեց, ինչպես իրը կզննեն: Ինչպես արտասահմանյան ավտոմեքենան՝ Էրմիտաժի դիմաց: Հովացուցիչից մինչև խլացուցիչը: Հետո հստակ արտաբերեց.

– Ես սիրում եմ ինձ հաճույք պատճառել…

Եվ անմիջապես՝ նավապետի կամրջակն ալիքների վրա: Ծվեն-ծվեն առագաստները: Քամին, աղահամ ցայտքերը… Տեսլապատրա՞նք…

Հարցնում եմ.

– Աշխատելու՞ ես:

– Ոչ: Ես ծնվել եմ, որ գողանամ:

– Գնա մեկուսարան:

Կուպցովը վեր է կենում: Համարյա քաղաքավարի է ինձ հետ: Դեմքին սառել է ուրախ զարմանքի ծամածռությունը:

Ինչ-որ տեղ երկնքին քսվելով ընկնում են սոճիները: Դղրդում է գերանատարը: Մի շաբաթ Կուպցովը կաշիոսկոր էր դառնում մեկուսարանում: Առանց ծխախոտի, առանց օդի, մի պատառ հացով:

– Բայց ուժե՞ղ ես, քաղաքացի՛ պետ,- ասում է նա, երբ անցնում եմ կալանախցի հրակնատ-պատուհանի մոտով:

Վերջապես հսկիչը նրան թողնում է զոնա:

Հենց նույն օրը նրա սեղանին հայտնվում են պահածոներ, կարագ, սպիտակ հաց: Հանելուկային կազմակերպություն է, բանտային քաղսոցապ, որ նրան մատակարարում է անհրաժեշտ ամեն ինչ…

Փետրվար: Նեղլիկ ստվերներ են պառկած սոճիների արանքում: Բուծարանում հաչում են շները:

Զորանոցից դուրս գալով՝ ես ու Հեդոյանը հայտնվում ենք զոնայում:
– Արի՛,- ասում է Ռուդոլֆը,- դու կրակաշերտի երկայնքով գնա, իսկ ես քեզ ընդառաջ կգամ:
Աղբանոցի մոտով քայլում է մեկուսարանի կողմը: Կանոնադրության համաձայն՝ պիտի միասին գնանք: Վերակացուները միայն զույգ-զույգ են շրջում: Իզուր չէ, որ կապիտան Պրիշչեպան ասում է. «Երկուսն ավելի է, քան «ես» և «դու»-ն: Երկուսը «մենքե է»:
Մենք բաժանվում ենք բասկետբոլի վահանակների տակ: Ձմեռային կեսգիշերին դրանք կախաղաններ են հիշեցնում: Հենց անհետանամ աղբարկղերի հետևը, Ռուդոլֆ Հեդոյանը կվերադառնա: Նա ծխախոտ կվառի ու կգնա օրապահություն, որտեղ տկտկում է ժամացույցը: Ես էլ կարող էի վերադառնալ: Մենք ամեն ինչ կհասկանայինք ու կծիծաղեինք: Բայց դրա համար ես չափազանց զգուշավոր եմ: Եթե նման բան պատահի, ամեն անգամ կնստեմ-կմնամ օրապահությունում:
Ես կնգուղը քաշում եմ աչքերիս ու բացում հարևան բարաքի դուռը: Անտանելի դղրդոցով ընկնում է դռան պահանգին կապած էմալապատ թեյամանը: Ուրեմն բարաքում քնած չեն: Թարեքները թափուր են: Սեղանին փող ու խաղաթղթեր են թափված: Շուրջը՝ մի քսան հոգի, տակաշորերով: Նայում են ինձ ու շարունակում խաղալ:
– Մի՛ վռազի, մեր տղա,- ասում է գրպանահատ Չալին,- հիմա բոլորիդ խուտուտ կտամ:
– Ագահությունն է հարիֆին կործանում,- նկատում է վալյուտչիկ Բելուգան:
– Մի բան էլ ավել,- խաղաթղթերն է ցույց տալիս Ադամը:
– Իջնում ու տանում եմ,- կամացուկ նետում է Կուպցովը…
Ես կարող էի և հեռանալ: Տեղը կդնեի թեյամանն ու դուռը հետևիցս կփակեի: Գոլորշու ամպեր կպոկվեին շոգ կացարանից: Ստուգիչ անցակետի լուսարձակներով կողմնորոշվելով՝ կանցնեի արգելագոտին: Կարող էի կանգնել, ծխել բասկետբոլի ցանցազամբյուղի տակ: Երեք րոպե կանգնել, նայել՝ ինչպես է ձյան մեջ կարմրին տալիս քնթուկի ծայրը: Իսկ հետո օրապահությունում ականջ կդնեի՝ ինչ է պատմում Ֆիդելը սիրո մասին: Ես նույնիսկ կկանչեի ընդհանուր ծիծաղի միջից.
– Է՜յ, Ֆիդե՛լ, ավելի լավ է պատմի՝ ոնց էիր սխալմամբ ավագ Եվչենկոյի վրա բարձրացել…

Այս ամենի համար ես բավականաչափ խիզախ չեմ: Եթե նման բան կատարվի, այլևս չեմ մտնի բարաք:
Ես շեմից ասում եմ.
– Երբ պետն է մտնում, պետք է ոտքի կանգնել:
Կալանավորները ծածկում են խաղաթղթերը:
– Ձև մի՛ արեք,- ասում է Կուպցովը,- հիմա չի կարելի…
– Եղան է, քաղաքացի՛ պետ,- ավելացնում է Ադամը:
Մյուսները լուռ են: Ես պարզում եմ ձեռքս: Խրձում եմ ճմռթված, տրորված թղթակտորները: Խցկում եմ գրպաններս ու ծոցս: Չալին ճանկում է արմունկս:
– Ձեռքե՛րդ,- նրան հրամայում է Կուպցովը:
Ու հետո՝ դառնալով ինձ.
– Հովացի՛, քաղաքացի՛ պետ:
Իմ թիկունքում շրխկում է դուռը, դղրդում է էմալապատ թեյամանը:
Ես գնում եմ դեպի դարպասները: Խնամքով, ինչպես շնիկին, ծոցումս տանում եմ փողերը:Ուսերիս զգում եմ այդ ճմռթված թղթակտորներին դիպած բոլոր ձեռքերի ծանրությունը: Արցունքների դաժանությունը: Չար կամքը…
Չնկատեցի՝ ինչպես հասան ետևիցս: Շուրջս նեղվածէք էր: Օտար ստվերները նետվեցին ոտքերիս տակ: Արգելապատի ցանցի մեջ թարթեց լամպը: Ու ես ընկա՝ առան ճիչս լսելու…
Հոսպիտալում պառկեցի մեկուկես շաբաթ: Գլխավերևս կախված էր ռադիոբարձրախոսը: Հարթ նրբատախտակե արկղում խաղաղ նորություններ էին բնակվում:Պահարանիկի վրա, շախմատի խաղաքարերի հետ խառն՝ դեղասրվակներն էին: Պատուհաններից այն կողմ փռվել էր սառնամանիք օրը: Բնապատկեր՝ լուսամուտի շրջանակում…
Չոր, մաքուր սպիտակեղեն…
Փափուկ հողաթափեր, լվացած, տաք խալաթ… Ուրախ երաժշտություն՝ բարձրախոսից…
Հիվանդանոցային շիտակություն ու կենցաղի բացորոշություն: Այս ամենը վարագուրում էր մեկուսարանը, դեղին կրակները՝ անտառամասի վրա, սառած, ավտոմատներին կպած ժամապահներին: Բայցևայնպես, Կուպցովին հաճախ էի հիշում: Երևի չէի զարմանա, եթե հիվանդասենյակ մտներ՝ ճամբարային զգեստը հագին: Ու դեռ գիրքն էլ ձեռքին:
Չգիտեի՝ ինձ ով է խփել հրշեջ վահանակի մոտ: Բայց զգում էի՝ սպիտակ շեղբից

ոչ հեռու առկայծեց Կուպցովի ժպիտը: Ընկավ, ստվերի պես, դեմքին…

Հողաթափերն ու խալաթը հագիս կտրեցի-անցա ձյունապատ բակը: Մութ կողաշենքում հայտնվելով՝ ոտքերիս քաշեցի սապոգներս: Հետո գերանատարով հասա շտաբ: Ներկայացա փոխգնդապետ Գրեչնյովին: Նրա սեղանին նիզակ էր ճոճում մի թուշե կտրիճ: Փոխգնդապետի պահվածքը պետային-մտերմավար էր.
– Ասում են՝ քո դեմ մահափորձ է եղել:
– Հեչ բան՝ մի քիչ խուտուտ տվին:
– Հետո՞, ի՞նչ լավ նորություն կա,- հարցրեց փոխգնդապետը:
– Էնպես,- ասում եմ,- ոչ մի:
– Ո՞նց պատահեց:
– Թուղթ էին խաղում: Փողերը վերցրի:
– Երբ քեզ գտան, մոտդ փող չկար:
– Բնական է:
– Իսկ ինչու՞ ես արկածներ որոնում:
– Նրա համար, որ նման բաները վերջանում են կոտորածով:
– Ընկեր փոխգնդապետ…
– Կոտորածով, ընկե՛ր փոխգնդապետ:
– Դա բխում է մեր շահերից:
– Ես կարծում եմ՝ օրենքով պիտի լինի:
– Լավ, համարիր քեզ ոչինչ չեմ ասել: Պիտերի՞ց ես:
– Օխտայից:
– Շտաբում էսպիսի անեկդոտ է պտտվում: Մայոր Բերեժնոյը գալիս է Ռոպչա: Օրապահը նրան ներս չի թողնում:Բերեժնոյը գոռում է. ,Ես զորամասի շտաբից եմե: Օրապահը պատասխանում է. ,Իսկ ես՝ Լիգովկայիցե: Սամբոյի հնարքներին տիրապետու՞մ ես:
– Քչից-շատից:
– Ասում են՝ ընդդեմ լինգի ու կացնի ոչ մի հնարք չի անցնի…Քեզ կարող ենք ուրիշ զորամաս տեղափոխել:
– Ես չեմ վախենում:
– Հիմարությո՛ւն: Կուղարկենք Սինդոր…
– Իսկ Սինդորում զեկեր չե՞ն: Նույն շանորդիներն ու ամենաթողությունը:
– Որոշել ես իրավու՞նք բանեցնել:

– Չեմ պատրաստվում:
– Ընկեր փոխգնդապետ…
– Չեմ պատրաստվում, ընկե՛ր փոխգնդապետ:
– Հրաշալի է,- ասաց նա,- թե չէ, մեկ էլ տեսար վերջ տվին: Պատկառելի չափսեր ունես՝ չեն վրիպի:…
Շտաբի բեռնատարն ինձ հասցրեց ուղանց:
Քայլում էի տրորված, հարթ ճանապարհով: Հետո՝ ձիու թրիքով աղտոտված փոքրիկ մարգագետնով: Ճամփան կարճելով՝ կտրեցի սառած գետակը: Ու գնացի առաջ ճնճղուկային խառնաղմուկի կողքով: Կապտավուն ձնակույտերի ու փշալարերի երկայնքով:
Պահաշների հաչոցի ուղեկցությամբ հասա զոնա: Տեսա լվացված վարդագույն դրոշը՝ զորանոցի ձեղնապատուհանի գլխին: Ծռված նրբատախտակե ,սունկնե ու օրապահին՝ դաշույնը գոտուց կախ: Անծանոթ զինվորին՝ ջրհորի մոտ: Կեղևահան վառելափայտի դարակները՝ ծածկի տակ: Ու հանկարծ հասկացա, որ կարոտել եմ այդ տղամարդկային ծանր կյանքին: Այդ կյանքին՝ ծխախոտով ու հայհոյանքով: Հարմոնիկներով, քուրքերով, լուսանկարներով, ժանգոտած ածելու սայրերով ու էժանագին օդեկոլոնով…
Մտա ավագի մոտ: Նրան տվեցի մթերային քարտը: Հետո անցա չորանոց: Այնտեղ, փայտամածի շուրջը, որի վրա ծանրաձողի ժանգոտ սկավառակներ էին լցված, նստել էին զինվորներն ու կարտոֆիլ էին մաքրում:
Հարցեր չտվին: Միայն գրագիր Բոգոսլովսկին քմծիծաղեց ու ասաց.
– Իսկ մենք քեզ հավերժ գրանցել էինք զորամասի ցուցակներում…
Ինչպես հետո իմացա՝ զորամասի շտաբից զինվորական հետաքննիչ էին ուղարկել: Դասախոսություն էր կարդացել «Բուրժուական արվեստի վերասերումը»:
Հետո նրան հարց են տվել.
«Մեր համբալն էնտեղ ո՞նց է»:
Դասախոսը պատասխանել է.
– Քննությունը միակ ճիշտ ճանապարհի վրա է, ընկերնե՛ր:
Կուպցովին տեսա զոնայում, բրիգադիրների հերթափոխման ժամանակ: Մոտեցավ ու անժպիտ հարցրեց.
– Առողջությունդ ո՞նց է, քաղաքացի՛ պետ:
– Ոչինչ,- ասում եմ,- իսկ դու առաջվա պես հրաժարվու՞մ ես:

– Առայժմ օրենքը կերակրում է:
– Նշանակում է՝ չես աշխատում:
– Ձեռնպահ եմ մնում:
– Ու չե՞ս աշխատելու:
Մեր կողքով, ազդանշանային ռելսի դղրդոցի ներքո, անցնում էին կալանավորները: Խմբերով ու մեկական գնում էին դեպի դարպասները: Բրիգադավարները զոնայով մեկ աշխատանքից հրաժարվողներ էին որսում: Իսկ Կուպցովը կանգնել էր բոլորի աչքի առաջ…
– Չե՞ս աշխատելու:
-Նիխտ,- ասաց նա,- կանաչ դատախազն է գալիս, գարունը, ամեն թփի տակ կացարան կա:
– Փախչելու մի՞տք ունես:
-Ըհը: Մանրավազքով: Ասում են՝ առողջարար է:
– Նկատի ունեցիր, որ անտառում ես քո հարցը առանց նախազգուշացման կլուծեմ:
– Նկատի ունեցա,- պատասխանեց Կուպցովն ու աչքով արեց:
Ես ճանկեցի նրա բամբակաբաճկոնի օձիքը:
– Լսի, դու մենակ ես: Գողական օրենքը չկա: Դու մենակ ես…
– Ճիշտ այդպես, մենակատար,- քմծիծաղ տվեց Կուպցովը,- հանդես եմ գալիս առանց երգչախմբի:
– Էդպես էլ կսատկես: Դու մենակ ես բոլորի դեմ: Ուրեմն՝ ճիշտ չես:
Կուպցովը հատ-հատ, հստակ ու խիստ արտաբերեց.
– Մենակը միշտ ճիշտ է…
Ես հանկարծ հասկացա, որ ուրախ եմ այդ կալանավորի համար, որն ուզում էր ինձ սպանել: Որ շարունակ նրա մասին եմ մտածում: Որ ապրել չեմ կարող առանց Կուպցովի:
Դա այնքան անսպասելի էր, հիմար ու զզվելի… Որոշեցի ամեն ինչ մի լավ ծանրութեթև անել, որ հոգուս մեղք չառնեմ:
Ես բաց թողեցի նրան ու հեռացա: Սկսում էի ինչ-որ բան կռահել: Ավելի ճիշտ՝ զգալ, որ Ուստ-վիմյան ճամբարակետի այդ վերջին ,օրենքով գողը իմ կրկնակն է: Որ ռեցիդիվիստ Կուպցովը (նույն ինքը՝ Շալիկով, Ռոժին, Ալյանով) ինձ համար թանկ է և անհրաժեշտ: Թանկ է զինվորական ընկերությունից, որ լափել է իմ իդեալիզմի փշուրները: Որ մենք մեկ ենք: Քանի որ մարդ այդպես միայն ինքն

իրեն կարող է ատել:
Ու նաև զգացի, թե ինչքան եմ հոգնել…
Հիշում եմ այն ձմեռը, փետրվարը, ուղղաձիգ ծուխը բարաքների վրա: Երբ ճամբարը քուն է մտնում, շուրջը լռում է ամեն ինչ: Միայն պահակակետում երբեմն-երբեմն գելխեղդը շղթան զնգացնելով, բարձրացնում է գլուխը: Ստուգիչ անցակետում երեքով ենք:
Ֆիդելը ձեռքերն է տաքացնում վառարանի վրա: Գլխարկի շքոցը ճաքած է: Թռչունի կտուց է հիշեցնում: Կողքին մի կին է նստած՝ հալված ձյունից մգացած մուշտակով:
– Մեր ազգանունը Կուպցով է,- գլխաշորն արձակելով՝ ասում է նա:
– Տեսակցությունն արգելված է:
– Ախր հեռվից եմ եկել:
– Արգելված է,- պնդում է Ֆիդելը:
– Տղանե՛ր…
Ֆիդելը լուռ է, հետո խոնարհվում է կնոջ կողմը, ինչ-որ բան է շշնջում: Ինչ-որ բան է ասում նրան՝ քիչ-քիչ լկտիանալով ու շիկնելով:
Ներս են բերում Կուպցովին: Քայլվածքը գողական է, ինչպես ազատության մեջ: Կորացած, բռունցքները թքերում: Եվ նորից ինձ պարուրում է նրա գլխավերևում շառաչող հողմի զգացողությունը: Նորից տեսնում եմ նավապետի կամրջակը… Կալանավորը կանգ է առնում անցուղի-միջանցքում: Նայում է ներս, ճանաչում է մեզ ու նայում է, նայում… Շարունակ նայում է: Միայն պողպատե վանդակաճաղերից կառչած մատներն են ճերմակին տալիս:
– Բո՛ղյա,- մրմնջում է կինը,- լրիվ կանաչել ես:
– Վարունգի պես,- քմծիծաղում է նա:
– Տեսակցությունն արգելված է,- ասում է Ֆիդելը:
– Նրանք առաջարկեցին,- կինը տրտում նայում է ամուսնուն,- նրանք առաջարկեցին… Ամաչում եմ կրկնեմ…
– Կգտնե՛մ,- կամացուկ, միայն ինքն իրեն ասում է Կուպցովը,- կգտնեմ ձեզ, տղե՛ք… Ու որ գտա՛…
– Քեզ համար,- սպառնում է Ֆիդելը,- մեկուսարանում լիքը վանդակ կա:
Ապա դառնում է հերթապահ վերակացուին.
«Տանե՛լ»:
Կինը ճչում է, լաց լինում: Կուպցովը կանգնել է՝ երեսը վանդակաճաղերին

հենած:
– Համաձայնի՛, Թամարա՛,- անսպասելի ու պարզորոշ ասում է նա,- համաձայնի՛: Համաձայնի՛ պետերի առաջարկածին…
Վերակացուն բռնում է նրա արմունկը:
– Համաձայնի՛, Տո՛մկա,- ասում է նա:
Վերակացուն, արտահագուստը վրայից համարյա պոկելով, քարշ է տալիս նրան: Երևում են նիհար, հզոր անրակները և կապույտ արծիվը՝ կրծքին:
– Համաձայնի՛,- դեռ խնդրում ու աղերսում է Կուպցովը…
Ես բացում եմ դուռը: Ելնում եմ դուրս: Ինձ ցոլարձակներով կուրացնում է դղրդացող բեռնատարը: Վրահաս ակնակույր խավարի մեջ ճանապարհը հազիվ է երևում: Սայթաքում եմ, ընկնում ձյուների մեջ: Տեսնում եմ աստղալույսից ճերմակած երկինքը: Տեսնում եմ դողդոջուն լույսերը անտառահատարանի վրա…
Ամբողջը մշուշվում է, լողում հեռու: Հիշում եմ ծովը, ավազաթմբերը, գունաթափ ավազը: Եվ աղջկան, որը միշտ իրավացի էր: Եվ ինչպես էինք երկուսով նստել շուռ տված նավակի ողնուցին:Եվ ինչպես ձկնիկ բռնեցի ու նորից գցեցի ծովը: Հետո աղջկան հավատացնում էի, որ ձկնիկը կանչել էր. ,Մերսի՛ե…
Հետո արդեն ցուրտը չէի զգում ու հասկացա, որ ցրտահարվում եմ: Այդ ժամանակ վեր կացա ու գնացի, թեև գիտեի, որ էլի եմ սայթաքելու և ընկնելու եմ…
Մի քանի րոպեից զգացի կեչու թաց վառելափայտի հոտը: Տեսա սպիտակ ծուխը պահակատան վրա:
Հսկիչ անցակետի պատուհանի ապակիները դողդոջուն դեղին ցոլքեր էին նետում քարշակների կոկած գերանուղու վրա:
Երբ ներս մտա, Ֆիդելը, կրակից դեմքը կնճռոտած, ածուխ էր հանում վառարանից: Շրջայցից վերադարձած հրահանգիչը թեյ էր խմում: Կինը չկար…
– Բայց ի՛նչ տիպն էր էդ Նյուրկան,- ասում էր Ֆիդելը,- գալիս ես թե չէ՝ է՛լ արաղ, է՛լ դոնդող: Լրիվ բամբո իտալյանո: Խմում ես, ուտում ես, ու հոգիդ չվեց դրախտ: Իսկ գլխավորը՝ էնպես սրտանց կասի, օրինակ. ,Վա՛նյա, թթվի ջուր կուզե՞սե:
– Հնար չկա՞,- մռայլ հարցրեց հրահանգիչը,- պայմանավորվեինք՝ փաթաթաններս լվանար:
Ու նորից եկավ գարունը: Ձմեռային յուրահատուկ ջերմությունը քշեց-տարավ

վերջին սև ձյունը: Օրերը դանդաղ ձգվեցին ձնաշրերով լվացված գերանուղիների վրայով…
Կուպցովն այդ ամիսն անցկացրեց մեկուսարանում: Մահվան դուռն էր հասել: Կրծքաբաց բամբակաբաճկոնի տակից ցցվում էին սրված անրակները: Իրեն խաղաղ էր պահում, միայն մի անգամ հարձակվեց Ֆիդելի վրա: Մենք նրանց մի կերպ բաժանեցինք:
Չզարմացա: Գայլը ատում է շներին ու մարդկանց: Բայց ավելի շատ՝ շներին: Ես նրան երեք անգամ թողեցի զոնա: Ու երիցս կարգագրիչի մատյանում գրառում հայտնվեց.
«Հրաժարում»…
Ուղեկցորդման խմբի կանաչ թիկնոցով պետը լապտերիկի լույսը գցեց ցուցակի վրա:
– Անտառահատո՛ւմ, դեպի ելքը,- հրամայեց նա:
Բրիգադն ընդունեցինք բնակելի գոտու դարպասների մոտ: Ես, տարածություն պահելով, հայտնվեցի շարասյան վերջում:
Չեբյու ավանը մեզ դիմավորեց շների հաչոցով, թաց գերանների հոտով, անտարբեր բնակիչների մռայլությամբ:
Հնոտիքով լի փոքրիկ բակերի երկայնքով գնացինք դեպի հիվանդանոց: Շրջվեցինք դեպի գետը, որ ազատվել էր սառույցից և անսպասելիորեն մաքուր էր ու փայլփլուն: Անցանք կոպտատաշ կամրջակով: Կտրեցինք երկաթգիծը, որի փայտակոճղերի արանքում խունացած կանաչ կար: Շրջանցեցինք հսկայական ցիստեռնները, ջրհանը և երկաթգծի արտաքնոցի փքաշուք շինությունը: Ու նոր միայն ելանք անձրևներից ցեխոտված գերանուղի:
– Երեխա ժամանակս սիրում էի ցեխերի մեջ չփչփացնել,- ասաց Ֆիդելը,- բա դու՞: Վախենում եմ մտածեմ, թե քանի կալոշ եմ թողել ցեխերի մեջ…
Անտառամասի մոտ հանդիպեցինք պահակախմբին: Ժամապահները կիսամուշտակներով էին: Ձեռքներին՝ հեռախոսներ ու գոտեպայուսակներ՝ ինքնաձիգի պահունակներով:
Պախապիլը կանգնեցրեց կալանավորներին ու ձեռքը շքոցին տանելով՝ սկսեց զեկուցել:
– Թողնել, ընդհատեց պահակախմբի պետ Շումեյկոն: Հսկայական ու չեչոտ՝ նա քնկոտ է թվում, մինչևիսկ՝ երբ վազում է գարեջուր բերելու: Սերժանտ Շումեյկոյի վառ անհատականությունը կարելի է գնահատել միայն արտակարգ

վիճակներում: Արտակարգ պատահարներից բացի, ամեն ինչ նրան վաղուց ձանձրացրել է:
Շումեյկոն հաշվեց կալանավորներին: Նրանց անձնական քարտերը դասդասելով՝ շարայուն առ շարայուն ուղարկեց նախազոնա: Ու վերջապես ձեռքով արեց ժամապահներին:
Մենք մտանք հսկիչ պահակակետ: Ֆիդելն ավտոմատը նետեց զինաբուրգին ու մեկնվեց թախտին:Ես ստուգեցի ազդանշանումն ու վառեցի վառարանը: Պախապիլը սեյֆից հանեց ռացիան: Դուրս քաշեց կարթի պես ճկուն մետաղյա ալեհավաքը: Հետո սկսեց երկնային ոլորտներ նետել խորհրդավոր հմայախոսքեր.
– Ալո՛, Վա՛րդ: Ալո՛,Վա՛րդ: Ես Քաջվարդն եմ: Ես Քաջվարդն եմ:
Ազդանշանումը սարքին է: Արգելաշերտը հերկված է: Գողերն աշխատում են:
Ձեզ չեմ լսում… Ձեզ չեմ լսում…
Ես մտա արտադրական գոտի ու քայլեցի գործիքային արհեստանոցի կողմը: Վառելիքի տակառի մոտ սևին էր տալիս տրտում ու երկարուկ հերթը: Մեկը վառեց, բայց և անմիջապես դեն նետեց ծխախոտը: Գրպանահատ Չալին ինձ տեսնելով՝ միտումնավոր բարձր երգեց.

Ախ, մաքրվե՛մ, լողանա՛մ
Ու մոռանամ ձեր մասին,
Ու մի ճամպրուկ գողանամ,
Թող գիշերը սպասի…

Խոսեցին հետս: Պատասխանեցի: Հետո անտառով ելա մարգագետին: Այնտեղ մեկը պպզել էր կրակի մոտ:
– Ձե՞ս աշխատում, դև՛:
– Ձեռնպահ եմ մնում: Ողջո՛ւյն, քաղաքացի՛ պետ:
– Ուրեմն, հրաժարվե՞լ ես:
– Առանց փոփոխության:
– Աշխատելու՞ ես:
– Օրենքը թույլ չի տալիս:
– Երկու շաբաթով մեկուսարան:
– Քաղաքացի՛ պետ…

– Կաշխատե՞ս:
– Քաղաքացի՛ պետ…
– Վարորդ, գերանակիր, ոստ հատող…
Ես առաջացա ու ցրիվ տվեցի խարույկը:
– Աշխատելու՞ ես:
– Հա,- ասաց նա,- գնանք:
– Ոստ հատո՞ղ, թե՞ գերանակիր:
– Հա: Գնա՛նք:
– Առա՛ջ ընկի:
Նա քայլում էր ճյուղերը պահելով: Ճահճի միջով, առանց ոտքերի տակ նայելու: Դիտաշտարակի տակ, կտրված ծառի կողքին, ծխում էին կալանավորները: Կարգագրիչին ասացի.
– Կացինդ տուր:
Նա քմծիծաղ տվեց:
– Կացի՜նը,- գոռացի:
Կարգագրիչը կացինը տվեց Կուպցովին:
– Լետյագայի բրիգադը կգնա՞ս:
– Հա՛:
Նրա մատներն անվարժ սեղմում էին կացնի կոթը: Մուգ, յուղափայլ փայտի վրա դաստակը նրբակերտ էր:
Ինչքան էի ուզում, որ բարձրացներ կացինը: Ես դեն կնետեի հիշողությունս: Ես կթոթափվեի քաղաքակրթության քսան դարերից: Ես նրան ցույց կտայի այն ամենը, ինչ սովորեցրել էին Ռոպչայում: Ես կխլեի կացինն ու թույլ չտալով, որ ուշքի գա…
– Դե՛,- հրամայեցի՝ կանգնելով երկու քայլի վրա: Հատիկ-հատիկ զգալով խոտը սապոգներիս տակ:- Դե՛,- ասում եմ:
Կուպցովը թեքվեց կածանից: Հետո դանդաղ ծնկեց կոճղի մոտ: Ձախ ձեռքը դրեց դեղին, խորդուբորդ, առկայծող հատվածքի վրա: Հետո թափ առավ ու կացինը խրեց մինչև վերջ:
-Վերջապե՜ս,- արնաքամ լինելով՝ ասաց նա,- այ հիմա լավ է:
-Ի՞նչ ես կանգնել, գանդո՛ն,- ինձ դարձավ մոտ վազած կարգագրիչը,- կրած ես, ձեն տու կարկատողին…

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆ

Ծեր Կալյու Պախապիլն ատում էր օկուպանտներին: Իսկ սիրում էր նա խմբերգելը, տնական դառը գարեջուրն էր դուր գալիս նրան ու նաև՝ փոքրիկ փամփլիկ երեխաները:
– Էս կողմերում մենակ էստոնացիք պիտի ապրեն,- ասում էր Պախապիլը,- ու էլ ոչ մեկը: Օտարներն էստեղ անելիք չունեն…
Գյուղացիք ականջ էին դնում ու հավանություն տալով՝ տմբտմբացնում գլուխները:
Հետո եկան գերմանացիները: Շրթհարմոն էին նվագում, երգում էին, երեխաներին շոկոլադ հյուրասիրում: Ծեր Կալյուին այդ ամենը դուր չեկավ: Նա երկար լռում էր, հետո հավաքեց ունեցած-չունեցածն ու գնաց անտառ:
Մի մթին անտառ էր, որ հեռվից անանցանելի էր թվում: Պախապիլն այնտեղ որս էր անում, խլացնելով ձուկ բռնում, քնում էր եղևնու ճյուղերի վրա: Կարճ ասած՝ ապրում էր, մինչև ռուսները վռնդեցին օկուպանտներին: Իսկ երբ գերմանացիները հեռացան, Պախապիլը վերադարձավ: Հայտնվեց Ռակվերեում, որտեղ խորհրդային կապիտանը նրան պարգևատրեց մեդալով: Մեդալը զարդարված էր չորս անհասկանալի բառերով, ինչ-որ կերպարանքով ու բացականչական նշանով:
«Էստոնացու ինչի՞ն է մեդալը,,- երկար մտորում էր Պախապիլը:
Բայցևայնպես, հոգածությամբ ամրացրեց շեվյոտե պիջակի դարձածալին:
Կալյուն այդ պիջակը միայն մի անգամ էր հագել՝ Լանսմանի խանութում:
Ապրում էր այդպես ու ապակի գցող էր աշխատում: Բայց երբ ռուսները զորահավաք հայտարարեցին, Պախապիլը նորից անհետացավ:
– Էստեղ պիտի մենակ էստոնացիք ապրեն,- հեռանալիս ասաց նա,- իսկ վանկաները, ֆրիցներն ու զանազան գրենլանները գործ չունեն էստեղ…
Պախապիլը նորից գնաց անտառ, որը միայն հեռվից էր անանցանելի թվում: Եվ նորից որս էր անում, խորհում էր, լռում: Եվ ամեն ինչ լավ էր:
Բայց ռուսները շուրջկալ սարքեցին: Անտառը լցվեց գոռում-գոչյունով: Սեղմվեց-փոքրացավ, ու Պախապիլին ձերբակալեցին: Նրան դատեցին որպես դասալիքի, ծեծեցին, թքեցին երեսին: Հատկապես ջանում էր կապիտանը, որ նրան մեդալ էր տվել:
Իսկ հետո Պախապիլին աքսորեցին հարավ, որտեղ դազախներն են ապրում:

Շուտով հենց էնտեղ էլ մեռավ: Երևի՝ սովից ու հողի օտարությունից…
Նրա որդի Գուստավն ավարտեց Տալլինի Լույզե փողոցի նավագնացության դպրոցն ու ռադիստի դիպլոմ ստացավ:
Երեկոները նստում էր Մյունդի-բարում ու թևթսոլիկ աղջիկներին ասում.
– Իսկական էստոնացին պիտի ապրի Կանադայում: Կանադայում և ուրիշ ոչ մի տեղ…
Ամռանը նրան զորակոչեցին պահնորդական ծառայության: Ուսումնական կետը տեղակայված էր Իոսսեր կայարանում: Ամեն ինչ հրամանով էր արվում. քունը, ճաշը, զրույցները: Խոսում էին օղուց, հացից, ածխահատի աշխատավարձից: Այդ ամենը Գուստավն ատում էր ու խոսում էր միայն իր լեզվով: Միայն էստոներեն: Նույնիսկ պահակաշների հետ:
Բացի այդ, խմում էր մեն-մենակ, խանգարում էին՝ կռիվ էր անում: Նաև թույլ էր տալիս ,կանացի կարգի միջադեպերե (ինչպես արտահայտվում էր քաղղեկ Խուռիևը):
– Բայց ինչ եսակենտրո՞նն եք, Պախապիլ,- զգուշորեն հանդիմանում էր քաղղեկը:
Գուստավը շփոթվում-շվարում էր, մի թեթև թուղթ խնդրում ու ծուռտիկ-մուռտիկ գրում էր.
«Երեկ, սույն թվի, ես ալկոհոլային խմիչք եմ չարաշահել: Որից հետո ցեխն եմ գցել զինվորական արժանապատվությունս: Հետայսու խոստանում եմ: Շարքային Պախապիլ»:
Որոշ ժամանակ մտմտալուց հետո պարտադիր ավելացնում էր.
«Խնդրում եմ չմերժել»:
Հետո փող էր ստացվում մորաքույր Ռէէթից: Պախապիլը խանութից մի լիտր շարտրեզ էր վերցնում ու գնում գերեզմանոց: Այնտեղ կանաչ աղջամուղջում ճերմակին էին տալիս խաչերը: Ավելի հեռվում, ջրամբարի եզրին՝ մի լքված շիրիմ կար, կողքին՝ նրբատախտակե կոթող: Պախապիլը ծանր նստում էր հողաթմբին, խմում էր ու ծխում:
– Էստոնացիները պիտի ապրեն Կանադայում,- խուլ մրմնջում էր նա միջատների միալար բզզոցի տակ: Նրանք, չգիտես ինչու, Պախապիլին չէին կծում…
Վաղ առավոտյան զորամաս ժամանեց մի անշուք սպա: Ակնոցից դատելով՝ գաղափարական աշխատող: Հայտարարվեց, որ ժողով է լինելու:
– Անցնել լենսենյակ,-մարմնամարզական զուգափայտերի մոտ ծխող

զինվորներին գոռաց օրապահը:
– Քաղաքականությունը մեր խելքի բանը չի,- տրտնջում էին զինվորները:
Բայց ներս մտան ու տեղավորվեցին:
-Ես պատերազմի որոտընդոստ համերգի նրբին լարն էի,- սկսեց փոխգնդապետ Մառը:
– Ոտանավո՞ր է,- հիասթափված ծոր տվեց լատվիացի Բալոդիսը…
Պատուհանից այն կողմ մթերապահն ու գրագիրը ընկել էին խոզի հետևից: Գոտիով կապկպել էին կենդանու ոտքերը ու փորձում էին տախտակի վրայով քարշ տալ բեռնատարի թափքը: Խոզը գեշ ծղրտում էր, նրա զիլ ճիչերից տնքում էր լսողի ծոծրակը: Ընկնում էր փորի վրա: Կճղակները սոթ էին տալիս թրիքոտ տախտակին: Մանրիկ աչքերը կուլ էին գնում ճարպածալքերի մեջ:
Բակով անցավ ավագ Եվչենկոն: Մի քացի հասցրեց խոզին: Հետո վերցրեց բահի կոթը, որ անտեր ընկած էր խոտերի մեջ…
– Խորհրդային բանակի զորամասերում արմատանում է մի վեհ ավանդույթ,- ասում էր փոխգնդապետ Մառը:
Եվ ապա.
– Զինվորներն ու սպաները ստանձնում են զինվորների շիրիմների շեֆությունը: Քրտնաջան վերականգնում են ռազմական սխրանքի պատմությունը: Կապ են հաստատում հերոսների հարազատների ու մերձավորների հետ: Նման ավանդույթի համակողմանմի զարգացումն ու ամրապնդումը յուրաքանչյուրիս պարտքն է: Թող չարախոսները դեղին դևի աշխարհում շեփորեն հայրերի ու որդիների կոնֆլիկտի մասին: Թող ուռճացնեն նրանց անտագոնիզմի մտացածին լեգենդը… Մեր երիտասարդությունը սրբորեն հարգում է հայրերի դամբանները: Սույնով հավաստելով սերունդների անխզելի կապը…
Խոզին խորդուբորդ տախտակի վրայով քարշ տվին վեր: Բեռնատարի թափքակողերը խուլ դղրդում էին: Դրանք վառ կանաչ էին ներկված: Խցիկից կախվելով՝ վարորդը նայում էր, թե ինչ է կատարվում: Հարևանությամբ, մարգաձողի վրա պտտվում էր մոլդավացի Դաստյանը, որն արդեն զորացրված էր հիվանդության հոդվածով: Սպասում էր զորամասի հրամանատարի հրամանին ու ման էր գալիս գոտին հանած, քթի տակ երգելով…
– Ձեր վաշտը տեղակայված է գերեզմանատան դիմաց,- ձգում էր փոխգնդապետը,- դա խորապես խորհրդանշական է: Մենք պարզել ենք, որ ի թիվս այլոց, այնտեղ կան նաև Հայրենական պատերազմի հերոսների շիրիմներ:

Այդ թվում և շքանշանակիրների: Այսպիսով, առկա են զոհվածների շեֆությունը ստանձնելու բոլոր պայմանները…
Խոզին խցկեցին թափքը: Անշարժ պառկել էր, միայն վարդագույն ականջներն էին թրթռում: Շուտով նրան կհասցնեն սպանդանոց, որտեղ անվերջանալի ճարպոտ մշուշ է: Զինվորը վարժ շարժումով նրան ոտնաջլից կախ կտա առաստաղի տակ: Հետո երկար, սպիտակ դանակով կզարկի սրտին: Կտրվածք անելով՝ արագ կմաշկի կեղտակուր խոզաստևով պատած կաշին: Եվ այդ ժամանակ զինծառայողները կվատանան արյան հոտից…
– Ո՞վ է այստեղ Պախապիլը:
Գուստավը ցնցվեց: Նա ելավ տեղից ու հիշեց, թե ինչ է կատարվել մեկ րոպե առաջ: Թե ինչպես եֆրեյտոր Պետրովը բարձրացրեց ձեռքն ու թաքուն ծիծաղից խեղդվելով՝ ասաց.
– Մեր զորամասում արդեն այդպիսի զինվոր կա: Ստանձնել է ընկած հերոսների շեֆությունն ու խնամում է նրանց գերեզմանները: Դա հրահանգիչ Պախապիլն է:
– Ո՞վ է այստեղ Պախապիլը,- անվստահ արձագանքեց Մառը,- դու՞ք եք, հա՞, Պախապիլը:
– Էդպես,- շիկնելով պատասխանեց Գուստավը:
– Վաշտի հրամանատարի անունից ձեզ շնորհակալություն եմ հայտնում: Ձեր նախաձեռնությունը պիտի տարածվի: Շտաբում մարտական պատրաստության գերազանցիկների հավաք է նախատեսվում: Կգաք ինձ հետ: Կպատմեք ձեր ձեռքբերումների մասին: Ճանապարհին կճշտենք ասելիքը:
– Ես, ճիշտն ասած, էստոնացի եմ,- սկսեց Պախապիլը:
– Դա նույնիսկ ավելի լավ է,- կտրեց փոխգնդապետը,- եղբայրական ինտերնացիոնալիզմի տեսանկյունից…
Շտաբը մարդաշատ էր:
Գրաֆիկների, գեղարվեստորեն ձևավորված վահանակների, ցուցադրական քարոզչության նյութերի տակ խմբվել էին զինվորները: Սապոգներն ու թաց մազերը պսպղում էին: Ծխախոտի ու կուպրի հոտ էր փչում:
Նրանք սանդուղքներով բարձրացան վեր: Մառը գրկել էր Պախապիլի ուսը: Սանդղահարթակում նրանց շրջապատեցին:
-Ծանոթացեք,- զուտ քաղաքացիական տոնով ասաց փոխգնդապետը,- սրանք մեր փարոսներն են: Սերժանտ Թխափսան, սերժանտ Գաֆիատուլին, սերժանտ Չիչիաշվիլի, կրտսեր սերժանտ Շահմամետև, եֆրեյտոր Լաուրի, շարքայիններ

Կեմոկլիձե և Հովսեփյան…
«Պերկելե,- մտքի մեջ ընկավ Գուստավը,- լրիվ ջիուդներ են…»:
Բայց այստեղ զանգը տվին: Բոլորն ուղղվեցին դեպի աղբամանները: Գցեցին ծխուկներն ու մտան ընդարձակ դահլիճը…
Եվ ահա Պախապիլն ամբիոնի մոտ է: Ներքևում դեմքեր են ճերմակին տալիս, ձախից նախագահությունն է, ջրամանը, ալ կարմիր վարագույրները: Կողքից՝ կոնտրաբասը, դահլիճից այն չի երևում:
Պախապիլը նայեց մարդկանց, շոշափեց գոտու մետաղյա ճարմանդը: Ապա քայլ արեց առաջ:
– Ես, ճիշտն ասած, էստոնացի եմ,- սկսեց նա:
Դահլիճում լռություն էր: Պատուհանների տակով զնգոցով անցնում էր տրամվայը…
Երեկոյան Գուստավ Պախապիլը ցնցվում էր շտաբի մեքենայի հետևի նստիքին: Հրահանգիչը մտաբերում էր իր ելույթը: Եվ ինչպես էր գրաֆինից ջուր լցնում: Ինչպես էր ծլնգում բաժակը ու ժպտում գեներալը՝ նախագահությունում: Եվ ինչպես իր կրծքին կրծքանծան ամրացրին (երեք անհասկանալի բառ, ինչ-որ կերպարանք ու գլոբուս): Իսկ հետո Մառն էր խոսում՝ գնահատելով շարքային Պախապիլի արժեքավոր նախաձեռնությունը… Ինչ-որ բան նախաձեռնությանը միանալու, զարգացնելու և ջանալու մասին…
Ու նաև՝ հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ…
Ժառանգորդության և անխզելի կապի կարգի ինչ-որ բան… Ընկած հերոսների գերեզմանների շեֆության նպատակով… Թեկուզև Պախապիլը էստոնացի է, բայց ժողովուրդների եղբայրական բարեկամության շնորհիվ…
Դիմացը վեր էր խոյանում վարորդի մեջքը: Կողքով սուրում էին աղքատիկ սաղարթներով ծառերը, արևից խարկված բլուրները, տայգայի խեղճուկրակ կանաչը:
Երբ մեքենան դղրդաց գծանցի վրա, Գուստավը վարորդին ասաց.
– Էստեղ կիջնեմ:
Վարորդն առանց շրջվելու թափ տվեց ձեռքն ու հետ դարձավ: Գուստավ Պախապիլը քայլեց թույլ առկայծող ռելսերի երկայնքով: Անցավ երկաթգծի հողաթումբը: Գերանուղին նրան հասցրեց խանութ:
Այստեղ գրպանները ծանրացան:
Նա կտրեց լքված մարգաղաշտն ու ոտք դրեց գերեզմանատան խանդակի

կամրջակին:
Խոնավ էր ու խաղաղ: Տերևները քամու տակ փսփսում էին: Գուստավն արձակեց համազգեստի կոճակները: Նստեց հողաթմբին: Ապուխտը ծնկներին դրեց: Շիշը՝ խոտերի մեջ:
Ու նոր միայն ծխեց՝ կարմիր նրբատախտակե շիրմակոթողին հենված:

ՈՒՂԻՂ ԳԾՈՎ

Երբ ինձ կապկպեցին հեռխոսալարով, խաղաղվեցի: Գլուխս ջեռուցման մարտկոցի կողքին էր: Իսկ կոպիտ կիրզայե սապոգներ հագած ոտքերս՝ առաստաղից կախված ջահի տակ: Այնտեղ, ուր մի ամիս առաջ տոնածառն էր: Լսում էի՝ ինչպես են զենք տալիս վերակարգին: Լեյտենանտ Խուռիևն ինչպես է հրահանգավորում զինվորներին: Գիտեի, որ նրանք հիմա ելնելու են դուրս, ուղիղ սառնամանիքի մեջ: Հետո կանցնեն սև կամրջատախտակներով, զոնայի երկայնքով, կաշեփոկերը պոկ տվող շների մոտով: Եվ յուրաքանչյուրը լապտերիկով կլուսավորի իր դեմքը, որ դիտաշտարակին կանգնած զինվորը կարողանա ճանաչել եկողին…
Ամենից առաջ որոշեցի հացադուլ հայտարարել: Սկսեցի սպասել ընթրիքին, որպեսզի ուտելիքին ձեռք չտամ: Ինձ այդպես էլ ընթրիք չբերեցին:
Լսում էի՝ ինչպես են վերադառնում ժամապահները: Ինչպես մտան զինանոց: Ինչպես են արգելապատի վրայով դղրդոցով հրահանգչին նետում գոտեպայուսակները՝ երկուական պահունակով: Ինչպես են զինաբուրգի վրա շարում եղյամից ճերմակած ավտոմատները: Եվ ինչպես են ճաշարանում տեղից տեղ շարժում թեթև դյուրալյումինե աթոռակները: Իսկ հետո հայհոյում խոհարար Բալոդիսին, որը նրանց համար մի քանի սոխ, ճարպ ու հաց էր պահել: Բայց, որքան հասկացա, մոռացել էր աղը…
Ցրտից սթափվելով՝ սկսեցի հիշել, թե ինչպես կատարվեց այդ ամենը: Ցերեկը խմեցինք ուղեկցորդումից ազատված կալանավորների հետ, որոնք փորձում էին գրկել ինձ ու շարունակ կրկնում էին.
– Բո՛ք, դու միակ մարդն ես Ուստվիմլագում…
Հետո ավանը կտրելով՝ գնացինք դուքանի կողմը: Փոստատան մոտ հանդիպեցինք անտառտնտեսության բուժակ Շտեռնին: Ֆիդելը մոտեցավ նրան: Գլխից թոցրեց մշկամկենու գդակը: Գդակով գետնից ձյուն քաղեց ու նորից քաշեց

գլխին: Մենք անցանք առաջ,իսկ բուժակի դեմքով ծորում էր կեղտաջուրը:
Հետո մտանք խանութ ու Տոնեչկայից տնաքաշ արաղ ուզեցինք: Նա ասաց, որ էժան խմիչք չկա:Այդ ժամանակ սկսեցինք գոռգոռալ, թե՝ մի հաշիվ է, ինչ կա, ինչ չկա: Քանի որ փողը, մեկ է, արդեն պրծել է:
Նա ասում է.
– Լվացեք պահեստի հատակը: Մի-մի սրվակ օդեկոլոն կտամ…
Տոնեչկան գնաց ջուր բերելու: Վերադարձավ մի քանի րոպեից: Տաշտից գոլորշի էր բարձրանում:
Մենք հանեցինք գիմնաստյորկաները: Ոլորեցինք, թրջեցինք տաշտի մեջ ու սկսեցինք հարել հատակի տախտակները: Ես ու Բալոդիսը բարեխղճորեն էինք աշխատում: Իսկ Ֆիդելը համարյա չէր խանգարում:
Հետո մի քիչ օդեկոլոն խմեցինք: Ուղղակի տանջահար էինք եղել սպասումից: Անտանելի դանդաղ էր լցվում բաժակի մեջ:
Համը սոսկալի էր, ու մենք կոնֆետ կերանք: Ծամում էինք վրաները կպած փաթեթաթղթի հետ:
Տոնեչկան ասաց. «Անո՛ւշ լինի»:
Լատվիացի Բալոդիսն աչքով արեց նրան ու Ֆիդելին հարցնում է.
– Դու կկարողանայի՞ր:
Իսկ Ֆիդելը նրան պատասխանում է.
– Մի միլիոն որ տային, հետն էլ՝ լուլ հարբած լինեի…
Երբ դուրս եկանք, մութն արդեն ընկել էր: Սղոցարանի գլխին և ավանում վառվում էին լույսերը:
Մենք գնացինք ձիանոցի երկայնքով, որտեղ սայլերն էին կանգնած, առանց ձիերի:
Ֆիդելը երգ ծոր տվեց. «Մենք անցնում ենք Ուրուգվայով…»: Իսկ Բալոդիսը վերցրեց կիթառն ու խփեց ծառին: Կտորտանքը գցեցինք սառցաձեղքը:
Ես նայեցի աստղերին: Գլուխս պտտվեց…
Այդ պահին Ֆիդելը մագլցեց հեռագրասյան վրա: Այն էլ՝ գրչահատ դանակն ատամներով բռնած: Տեխնիկապես գրագետ տղա էր ու համոզված էր, որ ինչ-որ բան կկարողանա փչացնել: Բարձրանում էր վեր ու վեր: Նրա ստվերը հսկայական էր: Անսպասելի ճչաց. «Մայրի՛կ…» ու ցած ընկավ տասմետրանոց բարձրությունից: Նետվեցինք նրա մոտ: Բայց Ֆիդելը վեր կացավ, թափ տվեց ձյունն ու ասում է…

– Ընկնելը մագլցել չի…
Սկսեցինք փնտրել դանակը: Բալոդիսն ասում է.
– Երևի կուլ ես տվել:
– Բան չկա,- ասաց Ֆիդելը,- մի հատ էլ ունեմ…
Հետո գնացինք զորանոցի կողմը: Մեզ ընդառաջ ելավ հացի ֆուրգոնը: Առանց ճանապարհից շեղվելու ընդառաջ գնացինք: Վարորդն արգելակեց, կողքի դարձրեց մեքենան ու ջարդուփշուր արեց ինչ-որ մեկի ցանկապատը…
Երբ վերադարձանք, վերակարգը զենքերն էր մաքրում: Մտանք ճաշարան ու սառը աղապուր կերանք: Ֆիդելն ուզում էր միզել աթոռակին դրած տակառիկի մեջ: Բայց ես ու Բալոդիսը համոզեցինք, որ այդպիսի բան չանի:
Հետո մտանք լենինյան սենյակ: Նստոտեցինք սեղանի շուրջը: Այն ծածկված էր ալ կարմիր սփռոցով: Շուրջը շառագունել էին վահանակները, լոզունգներն ու պլակատները: Առաստաղի տակ առկայծում էր ջահը: Անկյունում ամանորյա «Կայծակն» էր՝ խողովակաձև փաթաթած:
– Շո՞ւտ կգա կոմունիզմը,- հետաքրքրվեց Ֆիդելը:
– Թերթերին որ հավատանք՝ հենց վաղը: Իսկ ի՞նչ է պատահել:
– Պատահել է էն, որ լիքը պահանջմունք է կուտակվել:
– Ասում ես՝ ավելացնենք, հա՞,- աշխուժացավ Բալոդիսը:
– Ըհը՛,- գլխով արեց Ֆիդելը:
Ես ասում եմ.
– Իսկ ունակություններիդ մասի՞ն ինչ կաես:
– Հրաշալի է,- պատասխանեց Ֆիդելը,- լիքը ունակություն ունեմ:
– Մեր ուշունց տալու,- հուշեց Բալոդիսը:
– Ոչ միայն,- պաատասխանեց Ֆիդելը:
Նա սկսեց շարել շախմատի խաղաքարերը: Ես գլուխս դրեցի սփռոցին: Իսկ Բալոդիսն ուսումնասիրում էր Կենտկոմի քաղբյուրոյի անդամների լուսանկարները: Հետո ասաց.
– Ա՛յ քեզ բան: Չելյուստ է՞լ ազգանուն կլինի:
Այստեղ լենինյան սենյակ մտավ ավագ Եվչենկոն:
– Գուցե պառկեիք, հա՞, տղե՛րք,- ասաց նա:
Ու Ֆիդելը հանկարծ այնպե՛ս գոռաց.
– Ինչո՞ւ է շուրջը անարդարություն տիրում, ավա՛գ: Բացատրե՛ք, ինչո՞ւ: Գողը, ենթադրենք, իր գողության համար է նստած: Բա մե՞նք ինչի ենք անտեղի տեղը

կորչում:
– Իսկ ո՞վ է մեղավոր,- ասում է ավագը:
Ես ասում եմ.
– Եթե մեկը ցույց տար այն մարդուն, որ մեղավոր է… Որի խղճին է իմ բոլոր դժբախտությունների մեղքը… Ես նրան անմիջապես կխեղդեի…
– Լավ կլիներ գնայիք քնելու,- ասում է Եվչենկոն:
Այստեղ մենք վեր կացանք ու ու հեռացանք՝ առանց հրաժեշտ տալու: Իսկ Ֆիդելը նույնիսկ հրեց ավագին: Բակում, գերաններին նստոտած, ծխեցինք, ապա գնացինք տնտմաս:
– Բո՛բ, մտի զոնա, վառելիք բեր, թե չէ շարժիչս հանգչում է:
– Գնա՛,- արձագանքեց Բալոդիսը,- դուքանում շնապս չկա, իսկ զեկերն ինչքան ասես ունեն: Սուսուփուս կտան. ինքդ կտեսնես: Գիտեն, որ մենք էլ պարտքի տակ չենք մնա:
Նա քաշեց Ֆիդելի թևքից.
– Ծխելիք տու:
– Ծխելը վնաս է,- հայտարարեց Ֆիդելը,- ծխելը բացասական է ազդում սրտի վրա:
– Չէ՛, օգտակար է,- ասաց Բալոդիսը,- իսկ օդին ավելի օգտակար է: Գիտե՛ս ինչն է վնաս: Դիտաշտարակին կանգնելը:
– Ամենավնասակարը,- ասում է Ֆիդելը,- քաղպաարպմունքներն են: Ու երբ որ վազում ես հակազազով:
– Շարային պատրաստությունն էլ,- ավելացրի ես…
Ինձ զոնա չթողեցին: Հերթափոխի հսկիչը հարցնում է.
– Ո՞ւր ես գնում:
– Բնականաբար՝ զոնա:
– Անձնակա՞ն գործով:
– Ոչ,- ասում եմ,- հանրային:
– Օդու ես գնում, հա՞:
– Ըհը՛:
– Հե՛տ դառ:
– Տես, է՛,- ասում եմ,- ա՛յ քեզ սոցօրինապահություն: Ուրեմն թողենք էդ արաղը որևէ ռեցիդիվիստ խմի, հա՞: Ու կրկին անգամ քրեորեն հետապնդելի արարք կատարի:

– Դու գնում ես օդի բերելու: Շփվում ես կոնտինգենտի հետ: Իսկ հետո նրանք քեզ կօգտագործեն կասկածելի նպատակներով:
– Ո՞վ նրանք:
– Կոնտինգենտը… Քո մեջ զեկերի գծով անտագոնիզմ պիտի լինի: Դու պիտի ատես նրանց: Բայց մի՞թե դու նրանց ատում ես: Ոնց որ չի երևում: Հարց է ծագում՝ ո՞ւր է քո անտագոնիզմը:
– Իմ մեջ անտագոնիզմ չկա, նույնիսկ քո հանդեպ, ապուշի՛ մեկը…
– Հենց էդ եմ ասում,- անսպասելի համաձայնեց հսկիչն ու ավելացրեց,- ուզո՞ւմ ես քեզ համար անձնական պաշարներից լցնեմ:
– Լցրո՛ւ,- ասում եմ,- մենակ թե էլի անտագոնիզմի հույս չունենաս…
Ես սաթաքելով վերադառնում էի զորանոց: Մթության մեջ շրջանցեցի ձյունապատ շարահրապարակը: Հայտնվեցի չորանոցում, որտեղ վառարանը վառ էր: Կեռիկներից կախված էին բուշլատներն ու կիսամուշտակները:
Ֆիդելն աթոռը շոռ տալով՝ նետվեց իմ կողմը: Երբ ասացի, որ օդի չեմ բերել, լաց եղավ:
Ես հարցրի.
– Իսկ ո՞ւր է Բալոդիսը:
Ֆիդելն ասում է.
– Բոլորը քնած են: Հիմա մենակ ենք:
Այստեղ քիչ էր մնում ես էլ լաց լինեի: Պատկերացրի, որ մեն-մենակ ենք ամբողջ աշխարհում: Ո՞վ կսիրի մեզ: Ո՞վ հոգ կտանի մեզ համար:
Ֆիդելը, անտանելի ծղրտացնելով, ձգեց հարմոնիկը:
– Տե՛ս,- ասաց նա,- առաջին անգամ եմ գործիքը ձեռս առնում ու վատ չի ստացվում: Քեզ համար ի՞նչ նվագեմ՝ Բա՞խ, թե՞ Մոցարտ…
– Մոցարտ,- ասացի ես,- թե չէ հերթափոխը կզարթնի: Կարող է մռութներիս հասցնեն…
Մենք լռեցինք:
– Ձավաշվիլին չաչա ունի պահած,- ասաց Ֆիդելը,- բայց չի տա: Գնա՞նք:
– Հետը գլուխ դնելու հավես չունեմ:
– Էդ ինչի՞ որ:
– Չունեմ ու վերջ:
– Կարող է՝ վախենո՞ւմ ես:
– Ինչի՞ց պիտի վախենամ: Թքա՛ծ ունեմ:

– Չէ, վախենո՞ւմ ես: Վաղուց եմ նկատել:
– Գուցե քեզանից է՞լ եմ վախենում: Կարող է հենց Կոգանի՞ց էլ եմ վախենում:
– Կոգանից չես վախենում: Ինձանից էլ չես վախենում: Իսկ Ձավաշվիլուց վախենում ես: Բոլոր վրացիները դանակներով են ման գալիս: Հենց մի բան է լինում, ձեռը գցում են դանակին: Ձավաշվիլին ա՞յ էսքան մի սաքսան ունի: Ճտքի մեջ չի տեղավորվում…
– Գնացի՛նք,- ասում եմ:
Անզոր Ձավաշվիլին քնած էր պատուհանի տակ: Նույնիսկ քնի մեջ դեմքը գեղեցիկ էր ու մի քիչ ամբարտավան:
Ֆիդելն արթնացրեց նրան ու ասում է.
– Լսի, այլազգի՛, գուցե չաչա տայիր, հը՞…
Ձավաշվիլին վախեցած արթնացավ: Այդպես վեր են կենում ճամբարային պահնորդության բոլոր զինվորները, երբ անսպասելի են արթնացնում: Ձեռքը խոթեց բարձի տակ: Հետո նայեց, հասկացավ ինչն ինչոց է ու ասում է.
– Ի՞նչ չաչա, թանկագի՛նս, քնել է պետք:
– Տո՛ւր,- պնդում է Ֆիդելը,- ես ու Բոբը պիտի խումհարաթող լինենք:
-Բա դու վաղը ո՞նց ես ծառայության գնալու,- ասում է Անզորը:
Իսկ Ֆիդելը պատասխանում է.
– Էդ քու բեղի բանը չի…
Անզորը մեջքը մեզ դարձրեց:
Այստեղ Ֆիդելը սկսեց ծղրտալ.
– Էդ ո՛նց դու, սրիկա՛, ռուս զինվորին չաչա չես տալիս:
– Ո՞վ է էստեղ ռուսը,- ասում է Անզորը:- Դո՞ւ ես ռուսը: Դու ռուս չես: Դու ալկոհոլիստ ես:
Ու սկսվե՛ց:
Անզորը գոռում է.
– Շալվա՛: Գիգո՛: Վա՛յ մե: Առո՛ւնդա…
Վրա վազեցին տակաշորերով վրացիները, մինչևիսկ հյուսիսում՝ արևից մգացած: Նրանք սկսեցին այնպես թափահարել ձեռքերը, որ Ֆիդելի քթից արյուն եկավ:
Եվ այստեղ սկսվեց կռիվը, որ տարիներ շարունակ հիշվում էր պահնորդությունում: Ես վեց անգամ ընկա: Երեք անգամը վեր կացա: Վերջապես կապկպեցին հեռախոսալարով ու տարան լենինյան սենյակ: Բայց

նույնիսկ այստեղ էլ դեռ ինչ-որ մեկին հետապնդում էի: Կապկպված, խորդուբորդ տախտակներին պառկածս: Երևի դա հենց այն մարդն էր: Իմ ճակատագրի անհամար խեղումների մեղավորը…
Առավոտվա կողմ տրամադրությունդ միշտ ընկնում է: Մանավանդ երբ քնում ես սառը հատակին: Այն էլ՝ հեռախոսալարով կապկպված:
Ես սկսեցի ականջ դնել: Խոհարարը դղրդոցով վառելափայտ էր լցնում թիթեղի կտորի վրա: Դույլերը զնգզնգում էին: Հետո անցավ օրապահը: Հետո շխկացին դռներն, ու շուրջբոլորը լցվեց յուրահատուկ աղմուկով: Զորանոցի՛ աղմուկով, որտեղ միայն տղամարդիկ են կենում ու շրջում են ծանր սապոգներով:
Մի քանի րոպե անց լենսենյակ մտավ ավագ Եվչենկոն: Կռանալով սվին-դանակով կտրեց հեռախոսալարը:
– Շնորհակալությո՛ւն,- ասում եմ,- ընկե՛ր Եվչենկո: Ես, մեր մեջ ասած, էս ամենը ականջի հետև չեմ գցի: Ամեն ինչ կպատմեմ «Ամերիկայի ձայնի» թղթակցին:
– Պատմի՛ր,- ասում է ավագը,- մի զոնա լիքը էդ թղթակիցներից ունենք:
Հետո ասաց, որ ինձ կանչում է կապիտան Տոկարը:
Ես, դաստակներս տրորելով, գնացի գրասենյակ: Տոկարը վեր կացավ սեղանի հետևից: Պատուհանի տակ տեղավորվել էր վերջերս ինձ փոխարինած գրագիր Բոգոսլովսկին:
– Այս անգամ ներել չեմ պատրաստվում,- հայտարարեց կապիտանը,- կալանավորների հետ խմե՞լ եք:
– Ո՞վ, ե՞ս:
– Դո՛ւք:
– Դե որ խմել եմ… խմել եմ, ուրեմն…
– Ջուտ հետաքրքրության համար՝ ինչքա՞ն:
– Չգիտեմ,- ասացի,- գիտեմ, որ պահածոյի տուփով էինք խմում:
– Ընկե՛ր կապիտան,- միջամտեց Բոգոսլովսկին,- նա չի ժխտում: Նա զոջում է:
Կապիտանը զայրացավ.
– Ես այդ ամենն արդեն լսել եմ, ձանձրացա՛: Թող այս անգամ տրիբունալը վճռի: Նախկին պահնորդությունն այլևս չկա: Մենք, փառք Աստծո, արդեն կանոնավոր բանակի մաս ենք…
Նա դարձավ իմ կողմը.
– Դուք անձնակազմին արդեն մի քանի արտակարգ դեպք եք պարգևել: Դուք խափանում եք քաղպարապմունքները: Սադրիչ հարցեր եք տալիս լեյտենանտ

Խուռիևին: Երեկ շովինիստական մանրախնդրությամբ ծեծուշարդ եք սարքել: Ահա բժշկական եզրակացությունը, որ ստորագրել է բժիշկ Յավշիցը…
Կապիտանը թղթապանակից մի դեղնավուն թերթիկ հանեց:
– Ընկե՛ր կապիտան,- միջամտեց Բոգոսլովսկին,- ով ինչ ասես կարող է գրել:
Տոկարը թափ տվեց ձեռքն ու կարդաց.
«…Սերժանտ Գոդերիձեին հասցվել է մարմնական վնասվածք վեց ատամի չափով…»:
Նա հայհոյեց ու ավելացրեց.
«…ժանիքից ժանիքը՝ ներառյալ»: Սրա՞ն ինչ կասեք:
– Ավիտամինոզից է,- ասացի ես:
– Ի՞նչ:
– Ավիտամինոզ,- ասում եմ,- զզվելի են կերակրում: Բոլորիս ատամներն էլ շարժվում են: Մի թեթև կպար՝ հերիք է…
Կապիտանը կասկածանքվ նայեց դռան կողմը: Հետո վեր կացավ ու բացեց: Այնտեղ կանգնել էր Ֆիդելն ու ականջ էր դնում:
– Բարև ձեզ, ընկե՛ր կապիտան,- ասաց նա:
– Ահա,- ասաց Տոկարը,- հրաշալի է: Հենց Պետրովն էլ ձեզ կուղեկցորդի:
– Ես չեմ կարող,-ասաց Ֆիդելը,- քանի որ նա իմ ընկերն է: Ես չեմ կարող ուղեկցորդել ընկերոջս: Մեջս անտագոնիզմ չկա…
– Իսկ նրա հետ խմել կարո՞ղ եք:
– Այլևս չի կրկնվի,-ասաց Ֆիդելը:
– Բավակա՛ն է,- կապիտանը շտկեց գիմնաստյորկան,- հանե՛ք գոտին:
Ես հանեցի:
– Դրեք սեղանին:
Ես գոտիս նետեցի սեղանին: Պղնձե ճարմանդը շխկաց ապակուն:
– Վերցրե՛ք գոտին,- գոռաց Տոկարը:
Ես վերցրի:
– Դրեք սեղանին:
Ես դրեցի:
– Եֆրեյտոր Պետրո՛վ, վերցրեք զենքն ու մա՛ղշ ավազի մոտ՝ փաստաթղթերի ետևից:
– Ավտոմա՞տն ինչի համար է:
– Կատարե՛ք, թե չէ կփոխատեղվեք:

Այստեղ ես ասում եմ.
– Գուցե ուտելու բա՞ն տայիք: Սովամահ անելու իրավունք չունեք:
– Ձեր իրավունքները լա՛վ գիտեք,- քմծիծաղեց Տոկարը,- բայց ես էլ իմը գիտեմ…
Երբ դուրս եկանք, ես Ֆիդելին ասացի.
– Լա՛վ, մի՛ տխրի, դու չլինեիր, ուրիշն էր լինելու…
Հետո վարսակածավարի շիլայով նախաճաշեցինք, հացը խցկեցինք գրպաններս, տաք հագնվեցինք ու ելանք սանդղամուտ:
Ֆիդելը գոտեպայուսակից հանեց պահունակը, հենց աստիճանների վրա լիցքավորեց ավտոմատը:
– Գնացինք,- ասում եմ,- չարժե ժամանակ կորցնել:
Քայլեցինք դեպի գծանցը: Այնտեղ կարելի էր որևէ համընթաց բեռնատար կամ գերանատար նստել:
Հետևում մնացին զորանոցային խունացած դրոշը, ցանկապատի վրայից երևացող տրտում ծառերը և պղտոր սպիտակ արևը:
Ուղեփակոցն իջեցված էր: Ֆիդելը ծխում էր: Ես նայում էի մեր կողքով անցնող գնացքին: Կարողացա տեսնել երկնագույն վարագույրները, թերմոսը, լուսամփոփը… Ծխախոտով տղամարդուն: Նույնիսկ նկատեցի, որ գիշերազգեստով է:
Այդ ամենը սրտխառնոց էր առաջացնում:
Մեր կողքին մի գերանատար կանգնեց: Ֆիդելը ձեռքով արեց վարորդին: Մենք հայտնվեցինք նեղլիկ խցիկում, որտեղ բենզինի հոտ էր գալիս:
Ֆիդելն ավտոմատը դրեց ծնկների արանքը: Ծխեցինք: Վարորդը դարձավ իմ կողմն ու հարցնում է.
– Ինչի՞ համար, ախպե՛ր:
Ես ասում եմ.
– Ղեկավարությանը քննադատելու…
Զրհանի մոտ ճանապարհը դառնում էր ավանի կողմը: Գրպանիցս հանեցի առանց կաշեփոկի ժամացույցը, ցույց տվի վարորդին, ասում եմ.
– Կառնե՞ս:
– Բայց աշխատո՞ւմ է:
– Էն էլ ո՛նց: Կրեմլի ժամացույցից երկու ժամով ճիշտ:
– Քանի՞ս ես առում:

– Հինգ:
– Հի՞նգ:
– Դե լավ, յոթ:
Վարորդն արգելակեց: Հանեց փողը: Տվեց հինգ ռուբլի: Հետո հարցրեց.
– Հաուպտվախտում փողն ինչի՞դ է պետք:
– ԱղՉքավորներին եմ օգնելու,- պատասխանեցի ես:
Վարորդը քմծիծաղ տվեց: Հետո դեռ երկար զննում ու ականջին էր դնում ժամացույցը:
– Ծնունդին,- ասում է,- աներոջս կնվիրեմ, էդ քավթառին…
Դուրս եկանք խցիկից: Ձնաթմբերի արանքում սևին տվող գերանուղին տանում էր ավան:
Այն մեզ դիմավորեց էլեկտրաշարժիչի գվվոցով ու սահնակողերի ճռնչոցով: Վրաներս փչեց դատարկ փողոցների միջանցաքամին: Ավելի շատ շներ էին հանդիպում, քան մարդիկ:
Մեր ճանապարհն անցնում էր Վեսլյանայով: Արկղերի արտադրամասի կիսավեր քարե դարպասների մոտով: Ձյան մեջ թաղված խրճիթների մոտով: Ճաշարանի մոտով, որի բաց դռներից գոլորշին հորդում էր դուրս: Գարաժի մոտով, որտեղ մեքենաները շարվել էին, ինչպես ձիերը գիշերակացին: Ակումբի մոտով, որի ձեղնապատուհանի գլխին բարձրախոս էր կախված: Իսկ հետո՝ ցանկապատի երկարությամբ, որի մեջ, վաթսուն մետրը մեկ, նբատախտակե խցիկներ կային:
Ավելի հեռվում, բլրակից այն կողմ, ձգվում էին գլխադասային ճամբարակետի գորշ մասնաշենքերը: Այնտեղ բարձրանում էր շտաբի երկհարկանի աղյուսե շենքը, որ խրկված էր սպաներով, գրամեքենաների կտկտոցով և անհաշիվ բանակային մասունքներով: Այնտեղ, մետաղյա դռան ետևը, մեզ էր սպասում լավ կահավորված հաուպտվախտը՝ցեմենտած հատակով: Ու նաև՝ անշրիշակ, մերկ թարեքներով:
Արդեն երևում էր դարպասը՝ վրան հնգաթև աստղ:
– Մենք քեզ երաշխավորությամբ հետ կբերենք,- ասաց Ֆիդելը,- այ կտեսնես:
– Լավ: Կնստեմ հաուպտվախտում: Իսկ տրիբունալում, կարծում եմ, մի քանի տարվա հերթ դեռ կա…
Մենք սառցակալած գերանի վրայով անցանք խանդակը: Ես ասացի.
– Նայի փաստաթղթերը: Ժամկետ չե՞ն նշել:

– Չէ,- ասց Ֆիդելը,- իսկ ի՞նչ կա:
– Ի՞նչ ունենք շտապելու,- ասում եմ,- գնանք տորֆուհիների մոտ:
Նկատի ունեի տորֆահանքի կանանց: Սեզոնային աշխատողներ էին, ավանի ծայրի բարաքներում էին կենում:
– Թող կորչե՛ն,- ասում է Ֆիդելը:
– Ինչի՞ որ, խմելու բան կվերցնենք, փող կա:
Այստեղ նկատեցի, որ դա Ֆիդելի սրտով չէ: Որ թախծոտ աչքերով է նայում ինձ:
– Գնանք,- ասում եմ,- մարդկանց հետ կշփվենք:
– Բա թնդանո՞թը:
– Ավտոմատը կպահենք մահճակալի տակ:
Ֆիդելը քայլում է, լուռումունջ: Ես ասում եմ.
– Գնա՛նք: Կծխենք, կխմենք: Ես էլ անառականոց չեմ սիրում: Խաղաղ կնստենք, տաք տեղ, առանց գոռում-գոչյունի:
Իսկ Ֆիդելն ասում է.
– Լսի՛, հրես շտաբը, կողքներիս է: Ճահիճներով՝ հինգ րոպեի ճանապարհ: Հինգ րոպե՝ ու տաք տեղում ենք:
– Հաուպտվախտում, հա՞:
– Ըհը՛:
– Ցեմենտե հատակի՞ն:
– Հատա՞կն ինչ կապ ունի: Էնտեղ թախտ կա: Վառարան էլ: Ու ջերմաստիճանն էլ կանոնագրքով տասնվեց աստիճանից բարձր պիտի լինի…
– Լսի՛,- ասում եմ,- խելքին մոտ բան չես ասում: Հաուպտվախտը կա ու կլինի: Ե՛վ թախտը, և՛ տասնվեց աստիճանը, և՛ զինվորական հետաքննիչ Կոմլևը…
Իսկ հիմա գնանք տորֆուհիների մոտ:
– Արկածներ փնտրելո՞ւ,- սրտնեղած պնդում է Ֆիդելը:
– Հը՛մ, այ թե խոսքը ուր տարար: Ա՛յ թե ինչ է կատարվում մարդու հետ, երբ վզից թնդանոթ են կախում: Մի՛ քաշվի, հրամայի՛, քաղաքացի՛ պետ…
Այստեղ Ֆիդելն այնպե՛ս գոռաց.
– Ի՛նչ ես աքլորանում, հը՞, ինչ ես աքլորանում: Գնանք ուր ուզում ես: Ուր ուզում ես, էնտեղ էլ գնանք…
Մենք ուղղվեցինք դեպի դուքանը: Բարձրացանք սանդուղքով, շեմին մեր վրայից թափ տվեցինք ձյունն ու մտանք ներս: Ձկան ու նավթի հոտ էր գալիս: Անկյունում սևին էին տալիս տակառները: Դարակներին՝ սիգարետ, օճառ, պահածոներ:

Ոսկեգույն էր հալվայի՝ մաշված զեհերով խորանարդը: Շիկացած էլեկտրավառարանի կողքին մրափել էր կատուն: Ներքևում իրար էր անցել աքաղաղը: Անդադար ու կատաղի կտցահարում էր շաքարահացի մարմարագույն նախշազարդը:
Տոնեչկան մեզ երկու շիշ գինի տվեց: Ֆիդելը շշերը խցկեց գալիֆեի գրպանները: Հետո մի քիչ հալվա ու երկու տուփ խոզի մսի պահածո վերցրինք:
Ֆիդելն ասաց.
– Տառեխ էլ վերցրու:
Տոնեչկան ասում է.
– Տառեխը մի քիչ… բուրավետ է:
Ֆիդելը հարցնում է.
– Վատ է բուրո՞ւմ, թե լավ:
– Ոնց ասեմ, միջին,-ասում է Տոնեչկան:
Դուրս եկանք խանութից: Բարձրացանք բլուրն ի վեր: Եվ ահա հայտնվեցինք բարաքի առաջ, որի դռան գլխին աղոտ վառվում էր լամպը:

Մոտեցանք պատուհանին, թակում ենք: Անմիջապես մի տափակ դեմք ցցվեց դուրս: Մազերն արձակած կինը, դուռը ցույց տալով, երեք անգամ գլխով արեց:
Միջանցքում նրբատախտակի կտորով ծածկած դույլ կար: Անկյունում, պատին, սևին էին տալիս բրեզենտե թիկնոցները: Դրանց տակ շերեփներ, թոկեր ու կեռիկներ էին թփված…
Բարագում տաք է: Թուջե վառարանը լեփ-լեցուն է վրդագույն տապով: Անկյունից անկյուն շեղակի ձգվում է խողովակը:
Թարեքների վրա խառնիխուռն վերարկուներ ու բամբակաբաճկոններ են լցված: Փտած գերաններին ամսագրերից կտրած գունավոր լուսանկարներ են սոսնձված: Պահարանիկների վրա բրգվել է կեղտոտ ամանեղենը:
Մենք հանեցինք կիսամուշտակները: Տեղավորվեցինք սեղանի մոտ: Հենց կողքներիս, ծածկոցի տակ ինչ-որ մեկը քնած էր: Պատուհանի մոտ նստել էր գիմնաստյորկայով մի կին ու գիրք էր կարդում: Նույնիսկ չբարևեց:
– Տասնվեցերորդ հանրապետությունն է,- նրա մասին հանելուկային ասաց առաջին աղջիկը՞
Հետո ձայն տվեց ինչ-որ մեկին, որ բարքի խորքում էր.
– Նա՛դկա: կարոտած փեսացուներ են եկել…

Եվ ավելացրեց.
– Դե որ եկել եք, ձեզ զգացեք, ինչպես տանը…
Նա մորեգույն շալվարի փողքերը խցկել էր կոպիտ կիրզայե ոտնամանների մեջ, դաստակին կապտին էր տալիս վառոդի դաջվածքը. «Ամբողջ աշխարհը բարդակ է»:
Հայտնվեց չար ու գունատ դեմքով ընկերուհին: Դահուկորդի մորեգույն բաճկոնով էր, մահուդե նեզ փեշով ու հողաթափերով:
Մենք հանեցինք շշերն ու պահածոները: Աղջիկներն էմալապատ գավաթներ ու հաց բերեցին: Ու շարունակ ծիծաղում էին:
Պատուհանի գոգին սևին տվող տրանզիստորային մագնիտաֆոնն առանձնանում էր այլևայլ հնոտիքից:
Կարմիր շալվարով աղջկա անունը Զինա էր: Փեշավոր ընկերուհին բամբ ձայնով ներկայացավ.
– Ամոսովա Նադեժդա:
– Ո՞նց եք աշխատում,- հետաքրքրվեցց Ֆիդելը,- հուսով եմ՝ ոգևորությա՞մբ:
– Թող արջը աշխատի,- պատասխանեց Նադեժդան:
Զինան ավելի վճռական արտահայտվեց.
– Էն իմացածիցդ ծանր բան ձեռս չեմ առնում…
Ֆիդելը հարգանքով վեր քաշեց հոնքերը:
Լռություն տիրեց: Հետո Զինան հարցրեց.
– Տղաները պահնորդությունի՞ց են:
– Չէ՛,- ասաց Ֆիդելը,- արտիստներ ենք: Ավելի ճիշտ՝ դափնեկիրներ: Էս էլ իմ սաքսաֆոնը:
Ու գլխավերևում թափահարեց ավտոմատը:
– Տղանե՛ր,- ասաց Զինան,- դուք ոնց որ մի քիչ խփնված եք, հա՞:
– Ըհը՛,- ասում եմ, խելագարներ ենք: Ծուղրուղո՛ւ…
Ֆիդելը շշի բերանը էմալապատ գավաթների շուրփերին զնգացնելով՝ գինի լցրեց:
– Ողջ-առողջ լինենք,- ասաց նա:
– Ողջ-առողջ լինենք,- ասում եմ:
– Կլինեք, կլինեք,- ասաց Զինան,- մենք ստուգվում ենք: Էնպես որ, չվախենաք…
Ինչ-որ մեկը մեր թիկունքում գնում-գալիս էր բարաքով: Ինր-որ մեկը խնդրում էր, որ անջատենք մագնիտաֆոնը: Ինչ-որ մեկը նախասենյակում դղրդացնում էր շերեփները: Ինչ-որ մեկը ջուր էր խմում…

Հետո հայտնվեցին անտառտնտեսության տղաները: Տեսան մեր կիսամուշտակները: Ինչ-որ բան նյութելով՝ երկար շրջում էին պատուհանների տակ:
Բայց ինձ համար մեկ էր: Ոովհետև անսպասելի հիշել էի հերվա ձմեռը…
Այստեղ պահնորդական անձնակազմի հերթական հավաքն էր: Մեզ տեղավորել էին քառասուն տեղանոց վրանում: Մահճակները երկհարկանի էին: Ներքևում, վառարանի մոտ, շոգ էր, իսկ վերևում միջանցաքամիներ էին շրջում:
Ամեն առավոտ մեր խառնիխուռն ամբոխը գնում էր գլխադասային ճամբարակետի ճաշարան: Հետո պարապում էինք մարզադահլիճում կամ թերթում մեթոդական ձեռնարկները:
Ժամը յոթին մոտ ընթրելով՝ ցրվում էինք. մեկը՝ պարելու, մյուսները՝ ծանոթ տները:Մեծ մասը գնում էր տեղի ակումբ…
…Նվագախումբը դղրդում է: Տաքացած աղջիկները բազմության մեջ սպաներ են փնտրում: Խեղդող համազգեստներով շարքայինները դոփդոփում են պատերի տակ: Նրանք լոսյոն ու ախոռ են բուրում: Նրանց երկարաճիտները կեղծ զարդաքարերի կապույտ շողեր են արձակում:
Բայց ահա ռադիոլան լռում է: Ջինվորները բարձրանում են բեռնատարի թափքը: Հիմա նրանք անսովոր լկտիությամբ են խոսում կանանց մասին: Ես խավարի մեջ լսում եմ մեկի ձայնը.
– Հիշո՞ւմ ես սուր կրունկներով էն շեկին: Ես էդ շեկի վրա կպառկեի՛…
– Դու աթարի դեզին էլ կպառկեիր,- լսվում է ի պատասխան:
Վաղը սովորական օր է…
Մի անգամ երեկոյան ոտքով վերադառնում էի ակումբից: Երաժշտության ձայնը գնալով թուլանում էր: Փողոցի լապտերները չէին վառվում: Ճամփան առաջին ցրտերից քարացել էր:
Մի պահ դանդաղելով՝ անսպասելի շրջվեցի դեպի գրադարանի շենքը: Փայտաշեն, դիք աստիճաններով բարձրացա երկրորդ հարկ: Հետո բացեցի դուռն ու կանգնեցի շեմին:
Սրահում լուռ էր ու խաղաղ: Պատերի տակ շարված էին ապակեդուռ պահարանները: Մոտեցա փայտե արգելապատին: Ինձ ընդառաջ ելավ մի երեսնամյա կին՝ ակնոցով, նեղ դեմքով ու գունատ շուրթերով:
Կինն, ակնոցը հանելով ու անմիջապես քթարմատը տրորելով, նայեց ինձ: Ես բարևեցի:

– Ձեզ ի՞նչ է հետաքրքրում, բանստեղծությունն՞ը, թե՞ արձակ:
Ես խնդրեցի Բունինի պատմվածքները, որոնք սիրում էի դեռ դպրոցական տարիներից: Ստորագրեցի քառակուսի կապտավուն դրոշմաթղթի վրա: Նստեցի պատուհանի մոտ: Միացրի կորավիզ լամպը, սկսեցի կարդալ:
Կինը մի քանի անգամ վեր կացավ, դուրս եկավ սենյակից: Երբեմն նայում էր իմ կողմը:
Հասկացա, որ վախեցնում եմ: Տայգա, ճամբարային ավան, պահնորդ…
Ակնոցով կին…
Ինչպե՞ս է հայտնվել այստեղ…
Հետո տեղից տեղ էր շարժում աթոռները: Վեր կացա, որ օգնեմ: Նկատեցի, որ զգետը հնառճ է՝ չափազանց բարակ, կոշտ ու մշտապես սառը կտորից: Հագին լայնաբերան կաճյակներ էին…
Այստեղ պատահմամբ դիպա նրա ձեռքին: Թվաց՝ սիրտս կանգ առավ:
Սարսափով մտածեցի, որ հետ եմ վարժվել… Պարզապես մոռացել եմ այն ամենը, հանուն ինչի արժե ապրել… Իսկ եթե այդպես է, կողքովս ինչքա՛ն բան է հասցրել սլանալ-անցնել: Որքա՛ն բան եմ կորցրել: Ինչի՛ց եմ զրկվել ատելությամբ ու ահով լեցուն այս օրերի ընթացքում…
Հերթապահում ես մեկուսարանում: Հարևան խցում ձեռնաշղթաներն է շխկացնում Անագի-զադեն: Աղմկում է մեծ սղոցը:
Իսկ օրերը, ցուրտ, անհեթեթ օրերը անցնում են պատուհանների տակով, փոստից առաջ ընկնելով…
Վերադարձա սեղանի մոտ, փակեցի գիրքը: Դրեցի փայտե արգելապատի վրա:
– Դուր չեկա՞վ,- հարցրեց կինը:
– Ոչինչ,- ասում եմ,- շնորհակալություն: Գնալուս ժամանակն է…
Առանց հետ նայելու իջա աստիճաններով: Մինչև զինվորական ավանկիլոմետրուկես ճանապարհ կար…
Հիմա հիշեցի այդ ամենն ու Ֆիդելին ասում եմ.
– Գնանք էստեղից:
– Այ քեզ բա՛ն,- ասաց Ֆիդելը:
– Խմի-վերջացրու գինիդ ու գնացինք:
Աղջիկները հարցրին.
– Ձեզ, ի՞նչ է,հարսնացուն՞ն են սպասում:
Ու միայն քրքջացին մեր հետևից…

Մենք քայլում էինք լռության միջով, աստղերի ներքո: Ցանկապատի երկարությամբ ուղղվեցինք դեպի հովիտ: Այն ավրտվում էր շտաբի մթին ու զանգվածեղ ուրվապատկերով:
Հանկարծ ստվերներ ընկան արահետի վրա: Անտոտնտեսության տղաներն էին: Բայց Ֆիդելն անմիջապես բարձրացրեց ավտոմատն ու գոռաց.
– Անտառում կրակում եմ առանց նախազգուշացման…
Տղաները չքացան ծառերի արանքում, մթության մեջ՝
Ես առջևից էի քայլում՝ կողմնորոշվելով մարգաթոկերի շրջանակով: Այն կախաղանի պես սևին էր տալիս շտաբի շենքի առաջ:
Ֆիդելը գալիս էր իմ ետևից:
Արահետը նեղ էր, դահուկային վազքուղյակից ոչ լայն: Անընդհատ սայթաքում էի:
Երբ շրջանցեցիքն վերջին տները, նկատեցի գրադարանի լույսը: Դեղնավուն խաղաղ լույսը՝ պատուհանում: Մտածեցի կաճյակներ հագած կնոջ մասին: Համարյա տեսա նրան գրապահարանների պարսպապատից այն կողմ: Նեղվածք ու խեղդուկ, վառարաններից շոգած տարածության մեջ:
Եվ ահա, ասես փայտե սանդուղի վրա թաց հետքեր թողնելով, բարձրանում եմ այնտեղ: Անցնում եմ միջանցքը, բացում դուռը: Կինը վեր է կենում, նրա ականջօղերն օրորվում են: Լռությունն այնքան թանձր է, որ հստակ լսվում է նրանց զնգոցի մեղեդին: Կինը հանում է ակնոցն ու անմիջապես մատները հպում քթարմատին: Ես լսում եմ՝ «Ձեզ ի՞նչ է հետաքրքրում»:
– Գնացի՛նք,- ասաց Ֆիդելը,- ոտերս սառում են:
Ես նրան ասում եմ.
– Գրադարան պիտի մտնեմ:
– Տես, է՛: Բայց ուժեղ ես, հա՛:
– Էնտեղ մեկի հետ խոսելիք ունեմ:
– Վերջ տուր,- ասում է Ֆիդելը,- առանց էն էլ մի ամբողջ օր է՝ տեղ չենք հասնում:
Ես կանգ առա: Շուրջը՝ ոչ մի շնչավոր: Քիչ հեռվում ավանի դեղին լույսերն են: Կողքին մթին պատի պես վեր է խոյանում անտառը:
Ես ասում եմ.
– Ֆիդե՛լ, մարդ եղիր, թող գնամ: Էստեղ մեկի հետ ծանոթացել եմ: Պե՛տք է…
– Ուրեմն սպասելով սառեմ, քանի դեռ դուք գլուխկոնծի եք տալիս:
– Միասին գնանք:

Ֆիդելն ասում է.
– Չեմ կարող:
– Դու իմ ընկե՞րն ես,- ճչում եմ,- թե՞ քաղաքացի պետ: Ինչ ասեմ. տա՛ր: Հրամայի՛:
– Գնացի՛նք,- ասում է Ֆիդելը:
– Պարզ է,- ասում եմ:- Ճիշտ այդպե՛ս:
Բայց տեղից չենք շարժվում: Ֆիդելը քարացել է թիկունքիս:
– Ես,- ասում եմ,- գրադարան պիտի գնամ:
– Առա՛ջ անցիր:
– Ես պիտի…
– Դե՛…
Ես նայեցի այն կողմը, որտեղ շողում էր քառակուսի պատուհանը՝ դողդոջուն վարդագույն փարոսը: Հետո քայլ արեցի՝ շեղելով ճամփաս, ետևում թողնելով ուղեկցորդողի անհեթեթ կերպարանքը:
Այդ ժամանակ Ֆիդելը գոռաց.
– Կա՛նգ առ:
Ես շրջվեցի ու ասում եմ.
– Ուզում ես ինձ սպանե՞լ:
Նա հազիվ լսելի արտաբերեց.
– Հե՛տ դառ…
Այստեղ ես հայհոյեցի նրան ամենավերջին բառերով: Այն բառերով, որ լսել էի անտառահատարանում՝ կրակի մոտ: Եվ հսկիչ պահակետում՝ հերթափոխման ժամանակ: Եվ թաղթախաղի սեղանի մոտ՝ տուրուդմփոցից առաջ: Եվ բանտում՝ շմոնից հետո…
– Հե՛տ,- կրկնեց Ֆիդելը:
Ես գնում էի առանց հետ նայելու: Ես վիթխարիէի: Ես ինձնով ծածկում էի հորիզոնը: Ես լսում էի, թե պարպված սառցե լռության մեջ ինչպես շխկաց փակաղակը: Ինչպես ճռռոցով տեղի տվեց մարտական զսպանակը: Եվ ահա լցվում է փմփշտանոցը: Ես գիմնաստյորկայիս տակ զգացի ստանդարտ բանակային թիրախի բոլոր ինն օղակները…
Եվ այստեղ զգացի, թե ինչպես չարությունս եռաց իմ ներսում: Ասես ինքս, հենց ինքս էի նշան բռնել այդ մարդու վրա: Եվ այդ մարդն իմ դժբախտությունների միակ մեղավորն էր: Եվ այդ անգոտի մարդու խղճին էր

պատասխանատվությունն իմ իմ ճակատագրի բոլոր փորձությունների համար:
Եվ միայն դեմքը չհասցրի տեսնել…
Ես կանգ առա, նայեցի Ֆիդելին: Ցնցվեցի՝ նրա դեմքը տեսնելով: (Ատամներով մորթե թաթմանն էր բռնել): Հետո ինչ-որ բան գոռացի ու գնացի նրա վրա:
Ֆիդելը գցեց ավտոմատն ու լաց եղավ: Չգիտես ինչու՝ կիսամուշտակը վրայից պոկելով: Պոկոտելով գիմնաստյորկայի կոճակները:
Ես մոտեցա նրան ու կանգնեցի կողքին:
– Լա՛վ,- ասում եմ,- գնացի՛նք…

ԼԵՈՊՈԼԴ ՀՈՐԵՂԲԱՅՐՍ

Լեոպոլդ հորեղբորս կյանքը պատված էր տարաշխարհիկ մշուշով: Նրա մեջ ինչ-որ բան կար Մայն Ռիդի ու Կուպերի հերոսներից: Երկար տարիներ նրա ճակատագիրը խռովում էր իմ երևակայությունը: Հիմա արդեն՝ չէ:
Սակայն առաջ չընկնենք:
Իմ հրեա պապը երեք որդի ուներ: (Թող ձեզ չշփոթեցնի ասքապատումի այս խաբուսիկ նոտան): Որդիներին կոչում էին Լեոպոլդ, Միխայիլ և Դոնատ:
Կրտսերին՝ Լեոպոլդին, ասես դիտմամբ էին անդրծովյան անուն տվել: Կարծես կանխատեսելով աշխարհաքաղաքացու կենսագրությունը:
Դոնատը անորոշ, բալթալիտվական ծագում ունի: (Ինչը համահունչ է հորս անորոշ կարգավիճակին: Յոթանասուներկու տարեկանում նա վտարանդվեց Ռուսաստանից):
Զտարյուն ուղղափառ անուն կրող Միխայիլը տուբերկուլյոզից մահացավ պաշարված Լենինգրադում:
Համաձայնեք. անունը էապես կանխորոշում է մարդու բնավորությունն ու նույնիսկ կենսագրությունը:
Անատոլին համարյա միշտ անպատկառ ու կռվարար է:
Բորիսը՝ գիրության հակված խոլերիկ:
Գալինան՝ ճղճղան ու բանսարկու:
Զոյան՝ միայնակ մայր:
Ալեքսեյը՝ թուլակամ ու բարեհոգի:
Գրիգորի անվան մեջ նյութական բարեկեցության հնչյուններ եմ լսում:
Միխայիլ անվան մեջ վաղաժամ ողբերգական մահվան խուլ կանխանշան կա:

(Հիշեք Լոմոնոսովին, Կոլցովին, Բուլգակովին…):
Եվ այսպես շարունակ:
Միխայիլը ինքնամփոփ ու անմարդամոտ էր: Բանաստեղծություններ էր գրում: Հեռավոր Արևելքում ֆուտուրիստական խմբակ հիմնեց: Անձամբ Մայակովսկին նրան մի չափավոր բռի նամակ էր ուղարկել:
Հայրս պահել էր ավագ եղբոր գրքերից երկուսը: Մեկի անունը ,Մ-ու-ուե էր: Երկրորդինը մոռացել եմ: Այնտեղ ինչ-որ բարդ հանրահաշվական բանաձև կար: Բավական անհեթեթ բանաստեղծություններ են: Մի քնարական բանաստեղծություն ավարտվում է այսպես.
Դողում էի ամբողջ մարմնով, ուզում էի
Գլուխս՝ պատին ու փռվեմ գետին…
Գրքի պահպանված գրախոսությունից մտքումս մի կոպիտ արտահայտություն է մնացել. ,Հիմարին ասա՝ աղոթիր Աստծուն, գլուխը գետնին տալով կջարդվի…ե:
Միխայիլը անսովոր ներամփոփ մարդ էր: Ազգականները գաղափար անգամ չունեին, թե ինչով է զբաղվում: Մի անգամ, երբ արդեն հասուն մարդիկ էին, Դոնատն ու Միխայիլը հանդիպեցին Բրյանսկի ամառային թատրոնի հետնաբեմում: Պարզվեց՝ եղբայրները մասնակցում են նույն էստրադային ծրագրին: Դոնատը քառյակներ էր երգում: Միխայիլը հանդես էր գալիս գեղարվեստական աստմունքով:
Ավագ եղբայրները մղվում էին դեպի գրականությունը, արվեստը: Կրտսերը՝ Լեոպոլդը, մանկությունից գնում էր այլ՝ ավելի հուսալի ճանապարհով: Խարդախ էր մեծանում:
Տասնչորս տարեկանում նավահանգստում ծխախոտ էր վերավաճառում: Օտարերկրյա նավաստիներից սիգար էր գնում: Ուրին եղբայրների գիշերային ռեստորանի համար: Հետո անցավ գուլպաներին ու դիմահարդարման պարագաներին: Եթե պետք էր լինում, արտասահմանցիներին ուղեկցում էր Կոսոյ փողոցի հասարակաց տուն: Զուգահեռ՝ բռնցքամարտում էր ,Իկարե ակումբում: Իսկ կիրակի օրերը շեփոր էր փչում քաղաքային ակգում:
Տասնութ տարեկանում Լեոպոլդն իրականացրեց առաջին իսկական խարդախությունը: Բանն այսպես եղավ:
Քաղաքի կենտրոնական խանութներից մեկը մտավ մի տրտում, համեստ պատանի: Ճմռթված թերթով փաթաթած ջութակը ձեռքին: Պատանին դիմեց խանութպան Տանակիսին.

– Դրսում հեղեղ է: Վախենում եմ ջութակս թրջվի: Կարո՞ղ եմ առժամանակ թողնել այստեղ:
– Ինչու՞ ոչ,- անտարբեր պատասխանեց Տանակիսը:
Մեկ ժամ անց խանութ մտավ շքեղ հագուստով մի օտարերկրացի, որը հսկայական, կասկածելիորեն երկար բեղեր ուներ: Երկար զննեց դարակներին շարված գաղութային ծագումով ապրանքները: Հետո ձեռքը պարզեց, բացեց ճմռթված թերթն ու ճչաց.
– Չի՛ կարող պատահել: Չե՛մ հավատում: Սա երազ է: Արթնացրեք ինձ: Ի՜նչ հաջողություն. Իսկական Ստրադիվարիուս: Գնո՜ւմ եմ, գնո՜ւմ եմ:
– Չի վաճառվում,- ասաց Տանակիսը:
– Բայց ես պատրաստ եմ վճարել ինչքան կամենաք:
– Շատ եմ ցավում, բայց…
– Տասհինգ հազար, առձեռն:
– Շատ եմ ափսոսում, մայո՛…
– Քսա՛ն,- գոչեց օտարերկրացին:
Տանակիսը թեթևակի վարդագունեց:
– Ես կխոսեմ տիրոջ հետ:
– Դուք շռայլ միջնորդավարձ կստանաք: Ախր իսկական Ստրադիվարիուս է: Օ՜, մի՛ արթնացրեք, մի՛ արթնացրեք ինձ…
Շուտով հայտնվեց գունատ պատանին:
– Եկել եմ ջութակի ետևից:
– Ծախեք ինձ,- ասաց Տանակիսը:
– Չեմ կարող,- տխուր-տրտում պատասխանեց պատանին,- ավա՜ղ, չեմ կարող: Պապիկիս նվերն է: Միակ արժեքավոր բանը, որ ունեմ:
– Կանխիկ երկու հազար կտամ:
Պատանին քիչ էր մնում լաց լիներ:
– Իրոք շատ նեղն եմ: Այդ փողն իսկը տեղին կլիներ: Կգնայի բուժիչ ջրեր, ինչպես խորհուրդ է տալիս դոկտոր Շվարցը: Բայցևայնպես, չեմ կարող… Նվեր է…
– Երե՛ք,- ասաց խանութպանը:
– Ավա՜ղ,- չեմ կարող:
– Հի՛նգ,- գոռաց Տանակիսը:
Նա մտքում լավ էր հաշվում: «Հինգը կտամ այս տղային: Արտասահմանցին

կվճարի քսանհինգ հազար՝ գումարած միջնորդավարձը: Արդյունքում…»:
– Պապի՛կ, ների՛ր,- հեծկլտաց պատանին:- Ների՛ր ու մի՛ բարկանա:
Հանգամանքներն են ստիպում գնալ այս քայլին:
Տանակիսն արդեն փողն էր հաշվում:
Պատանին համբուրեց ջութակը: Հետո, համարյա հեկեկալով, դուրս եկավ:
Տանակիսը գոհունակությամբ ձեռքերն էր շփում:
Պատանին անկյունադարձին կանգ առավ: Խնամքով հաշվեց փողերը: Հետո գրպանից հանեց հսկայական շեկ բեղերը: Գցեց ջրատարն ու արագ հեռացավ…
Մի քանի ամիս անց Լեոպոլդը փախավ տնից: Օվկիանոսային շոգենավի նավամբարում հասավ Չինաստան: Ճանապարհին նրան կծեց առնետը:
Չինաստանից մեկնեց Եվրոպա: Չգիտես ինչու՝ հաստատվեց Բելգիայում:
Անգիջում Իսահակ պապը նրա բացիկները չէր կարդում:
– Մալխամովես,- ասում էր պապը,- պերե օդում:
Ու կարծես մոռացավ Լեոպոլդի գոյությունը: Տատիկը թաքուն լալիս ու աղոթում էր:
– Էդ Բելգիայում երևի լրիվ անհավատներ են,- կրկնում էր նա:
Անցավ մի քանի տարի: Իջավ ,երկաթե վարագույրը: Լեոպոլդից այլևս լուր չկար:
Հետո հայտնվեց ոմն Մոնյա: Մի շաբաթ մնաց պապ ու տատիս մոտ: Ասաց, որ Լեոպոլդը գնում է առևտրական գծով:
Մոնյան հիանում էր հնգամյակների թափով: Երգում էր. ,Մեր շոգեքարշ, սուրա առաջ…ե: Ընդ որում, ակնհայտորեն անդաստիարակ մարդ էր: Զուգարանից բնակարանով մեկ գոռում էր.
-Պապի՜ր: Պապի՜ր:
Տատիկս դռան արանքից նրան էր տալիս թերթը:
Հետո Մոնյան մեկնեց: Շուտով պապիս գնդակահարեցին որպես բելգիական լրտեսի:
Կրտսեր որդու մասին մոռացան ամբողջ քսան տարով:
Վաթսունմեկ թվին հայրս պատահմամբ մտավ կենտրոնական հեռագրատուն: Խոսքի բռնվեց աշխատակցուհիներից մեկի հետ: Պարզվեց, որ հեռագրատանն ունեն բոլոր եվրոպական մայրաքաղաքների հասցեներն ու հեռախոսահամարները: Բացեց Բրյուսելի հեռախոսագիրքը: Եվ անմիջապես գտավ իր բավական եզակի ազգանունը…

– Կարո՞ղ եմ խոսակցություն պատվիրել:
– Իհարկե,- եղավ պատասխանը:
Երեք րոպեից միացրին Բրյուսել: Ծանոթ ձայնը հստակ ասաց.
– Հելո՛:
– Լեոպո՛լդ,- գոռաց հայրս:
– Մի րեպո, Դո՛դիկ,- ասաց Լեոպոլդը, – տելեվիզիոնն անջատեմ…
Եղբայրներն սկսեցին գրել իրար:
Լեոպոլդը գրում էր, որ կին ունի՝ Հելենան, որդին՝ Ռոմանոն և դուստրը՝ Մոնիկը: Ինչպես և պուդել, որին Իգոր են կոչում: Որ «իր գործն» ունի: Զբաղվում է գրամեքենաների ու թղթի վաճառքով: Որ թուղթը թանկանում է, ու դա շատ ձեռնտու է: Որ արժեզրկումը, համենայն դեպս, համարյա սնանկացրել է իրեն: Լեոպոլդն իր աղքատությունն այսպես էր նկարագրում.
«Տներս նորոգման կարիք ունեն: Ավտոպարկս չորս տարի է՝ չի թարմացվել…»:
Հորս նամակները շատ ավելի լավատես էին.
«…Ես գրող եմ ու ռեժիսոր: Ապրում եմ ոչ մեծ, հարմարավետ բնակարանում: (Նկատի ուներ նրբատախտակով միջնապատված իր փոքրիկ սենյակը): Կինս մեքենայով մեկնել է Մերձբալթիկա: Իսկապես, հորս կինը արհմիութենական ավտոբուսով մեկնել էր Ռիգա՝ զուգագուլպա առնելու): Իսկ ինչ վերաբերում է արժեզրկմանը՝ չգիտեմ էլ՝ ինչ է…»:
Հայրս հուշանվերներով ողողեց Լեոպոլդին: Փայտե գդալների ու թասերի մի ամբողջ տորմիղ ուղարկեց: Լև Տոլստոյի ինքնաեռի մելքիորե պատճենը: Մի քանի փոքրիկ քանդակ՝ ուրալյան փայլաքարերից: Շևչենկոյի «Կոբզարի»՝ տապանաքարի չափսի հոբելյանական հրատարակությունը: Ինչպես և՝ «Բրոնզե տապանակ» անվանումով ստեղծագործություն:
Լեոպոլդն արձագանքեց գեղեցիկ փաթեթավորված ձյունաճերմակ թաշկինակով:
Հետո հորս տրիկոտաժե շապիկ ուղարկեց «Էդդի Շապիրո. Անիվներ ու դողեր» մակագրությամբ:
Հայրս չէր հանձնվում: Զանգեց քաղկոմի ծանոթ հրահանգչին: Ծանոթությամբ մի եզակի հուշանվեր հայթայթեց: Այն է՝ ութ կիլոգրամանոց գլուխ շաքար: Փաթաթված երկնագույն սատինափայլ թղթով: Վեց դյույմ տրամաչափի արկի պես մի բան: Ու մակագրություն՝ յատերով. «Առաջին գիլդիայի վաճառական Ելպիդիֆոր Ֆոմինի առևտրական վաճառատուն»:

Ստիպված էր եղել ծանոթ հրահանգչին ռռոգել կոնյակով: Եզակի հուշանվերն ուղարկվեց Լեոպոլդին:
Երկու ամիս անց՝ ծանրոցի ծանուցագիր: Քաշը՝ տասուկես կիլոգրամ:
Մաքսատուրքը՝ վաթսունութ ռուբլի:
Հայրս անսովոր հուզված էր: Փոստատան ճանապարհին երևակայում էր. «Մագնիտաֆոն… Մուշտակ… Վիսկի…»:
– Քո կարծիքով՝ մուշտակը ինչքա՞ն կքաշի:
– Երեք կիլոգրամ,- պատասխանեցի:
– Ուրեմն երեք մուշտակ է ուղարկել…
Գլխավոր փոստատան ծառայողը բերեց ծանր արկղը:
– Տաքսի նստենք,- ասաց հայրս:
Վերջապես հասանք տուն: Հայրս, նյարդային ծիծաղով, հանեց դուրը:
Ներբատախտակե կափարիչը ճռնչոցով պոկվեց:
– Ապո՜ւշ,- տնքաց հայրս:
Արկղի մեջ տասը կիլոգրամ դեղնավուն շաքարավազ էր…
Ութ տարի անց ես ու մայրս ստիպված էինք վտարանդվել: Հայտնվեցինք Ավստրիայում: Հյուրանոցի տերը՝ Ռեյնհարդը, խիստ բարեհաճ էր մեր հանդեպ: Ամեն առավոտ տաք բուլկիներով ու ջեմով թեյ էին մատուցում: Ամեն առավոտ հյուրանոցատերը անփոփոխ հարցնում էր.
– Մի բաժակ օղի կխմե՞ս…
Բացի այդ, ռադիոընդունիչ ու էլեկտրական տոստեր տվեց:
Երեկոները երբեմն զրուցում էինք:
Իմացա, որ Ռեյնհարդը Արևելյանից անցել է Արևմտյան հատված: Որ շինարար-ինժեներ է: Որ հյուրանոցում աշխատելը սրտովը չէ, չնայած փոքր եկամուտ չի բերում…
– Ամուսնացա՞ծ ես,- հարցրի ես:
– Էրիկան Զալցբուրգում է ապրում:
– Ասում են՝ ամուսնությունն ապահարզանի սահմանին ամենատևականն է:
– Ես արդեն անցել եմ այդ սահմանը: Բայց, մեկ է, ամուսնացած եմ:
Զարմացա՞ր:
– Չէ,- ասացի ես:
– Կուսակցության անդամ եղե՞լ ես:
– Չէ:

– Իսկ երիտասարդական միությա՞ն:
– Հա: Իրեն-իրեն ստացվեց:
– Հասկանում եմ: Արևմուտքը դուրը գալի՞ս է:
– Բանտից հետո ինձ ամեն ինչ դուր է գալիս:
– Հորս քառասուն թվին բանտարկեցին: Հիտլերին «բրաուն շվայն» էր ասել:
– Կոմունի՞ստ էր:
– Չէ: Կոմի չէր: Նույնիսկ կարմիր չէր: Պարզապես կրթված մարդ էր: Լատիներեն գիտեր… Դու լատիներեն գիտե՞ս:
-Չէ:
– Ես էլ չգիտեմ: Իմ երեխաներն էլ չեն իմանա: Ափսո՜ս… Կարծում եմ՝ լատիներենն ու Ռոդ Սթյուարտը անհամատեղելի են:
– Ո՞վ է Ռոդ Սթյուարտը:
– Շիզոֆրենիկ՝ կիթառով: Մի բաժակ օղի կխմե՞ս:
– Կխմեմ:
– Սենդվիչներ բերեմ:
– Կարիք չկա:
– Ճիշտ ես…
Վիեննայից գրեցի Լեոպոլդին: Հորեղբայր զանգեց հյուրանոց: Ասաց, որ կգա ինքնաթիռով, շաբաթվա վերջին: Ավելի ստույգ՝ շաբաթ օրը: Կիշևանի «Կոլիզեումում»: Խնդրում է շաբաթ օրը չնախաճաշել:
– Քեզ կհյուրասիրեմ մի լավ ռեստորանում,- ասաց նա…
Վաղ առավոտյան նստած էի ,Կոլիզեումիե սպասասրահում: Այդ հյուրանոցը մերինից շատ ավելի շքեղ տեսք ուներ: Սրահում նրբագեղ շներ էին շրջում: Հանդերձապահը նման էր կինոդերասանի:
Ուղիղ տասնմեկին իջավ հորեղբայրս: Անմիջապես ճանաչեցի: Լեոպոլդն այնքան նման էր հորս՝ բարձրահասակ, վայելչատես, գեղեցիկ, արհեստական ատամներով: Կողքից քայլում էր ջահելատես կինը:
Գիտեի, որ պետք է գրկեմ այդ, ըստ էության, անծանոթ մարդուն: Մենք գրկախառնվեցինք: Համբուրեցի Հելենայի ձեռքը, որով հովանոցն էր բռնել:
– Ինչ խոշո՜ր ես,- գոչեց Լեոպոլդը:- Իսկ մայրի՞կն ուր է:
– Վատառողջ էր:
– Ափսո՜ս: Ես նրա լուսանկարներն եմ տեսել: Դու շատ նման ես մորը:
Ես փաթեթը պարզեցի նրան. Ձկնկիթ էր, փայտե գեղջկատիկնիկներ ու քաթանե

սփոռց:
– Շնորհակալ եմ: Իրերը կթողնենք բարապանի մոտ: Ես էլ ձեզ համար նվերներ ունեմ… Իսկ հիմա կգնանք ռեստորան: Ռեստորաններում լինել սիրու՞մ ես:
– Դրա մասին մի տեսակ չեմ մտածել:
– Հաճելի երաժշտությո՛ւն, գեղեցիկ կանա՛յք…
Գնում էինք դեպի կենտրոն: Լեոպոլդն անդադար խոսում էր: Հելենան լուռ ժպտում էր:
– Տես ինչքան մեքենա կա: Արտասահմանյան մեքենա տեսած կա՞ս:
– Լենինգրադում զբոսաշրջիկներ շատ են լինում:
– Վիեննան փոքր քաղաք է: Ասենք՝ Բրյուսելն էլ: Ամերիկայում մեքենաներն ավելի շատ են: Բա խանութնե՛րը: Լենինգրադում մեծ խանութներ կա՞ն:
– Խանութները կան…
– Ինչ խոշ՛՛րն ես: Կանայք երևի քեզ սիրում են:
– Շուտով կերևա:
– Հասկանում եմ: Կինդ Ամերիկայում է: Նրան Հռոմում այցելեցինք: Պլաստիկե տոպրակ էր բռնել պայուսակի փոխարեն: Մի լավ պայուսակ նվիրեցի, տասնութ դոլարանոց:
Մտանք ներս, հանվեցինք, տեղավորվեցինք լուսամուտի տակ:
Ընդհանուր կարգի մեղմ երաժշտություն լսվեց: Գեղեցիկ կանայք կարծես թե չէին երևում:
– Սրտիդ ուզածը պատվիրիր,- առաջարկեց Լեոպոլդը:- Գուցե սթե՞յք կամ որսամի՞ս:
– Իմ համար մեկ է: Ձեր հայեցողությամբ:
– Խնդրում եմ, ինձ «դու» ասես: Ախր հորեղբայրդ եմ:
– Քո հայեցողությամբ:
– Որևէ նրբախորտի՞կ: Նրբախորտիկներ սիրու՞մ ես:
– Չգիտեմ:
– Ես շատ եմ սիրում: Բայց լյարդս լավ չի: Քեզ համար ձկան պաշտետ ու մի քիչ ծնեբեկ կպատվիրեմ:
– Հրաշալի է:
– Ի՞նչ կխմես:
– Գուցե օղի՞:
– Դեռ շատ շուտ է: Կարծում եմ՝ սպիտակ գինի կամ թեյ:

– Թեյ,- ասացի ես:
– Եվ պիստակով պաղպաղակ:
– Հրաշալի է:
– Ի՞նչ կխմես,- կնոջը դիմեց Լեոպոլդը:
– Օղի,- ասաց Հելենան:
– Ի՞նչ,- զարմացավ Լեոպոլդը:
-Օղի՛, օղի՛, օղի՛,- կրկնեց կինը:
Մոտեցավ մատուցողը. սևահեր, թիկնեղ, հավանաբար հարավսլավացի կամ հունգարացի:
– Զարմիկս է, Ռուսաստանից,- ինձ ներկայացրեց Լեոպոլդը:
– Մի րոպե,- ասաց մատուցողը:
Ու անհետացավ: Երաժշտությունն անսպասելի դադարեց: Թեթև ֆշշոց լսվեց: Հետո՝ «Մերձմոսկովյան երեկոների» ձանձրացրած հնչյունները:
Հայտնվեց մատուցողը: Դեմքը շողում ու փայլում էր:
– Շնորհակալ եմ,- ասացի ես:
– Լավ թեյավճար կստանա,- ականջիս շշնջաց Լեոպոլդը:
Մատուցողն ընդունեց պատվերը:
– Հա՛, քիչ մնաց մոռանայի,- գոչեց Լեոպոլդը,- ասա՝ ինչպես են մահացել ծնողներս:
– Պապին պատերազմից առաջ բանտարկեցին: Ռայա տատը վաթսունվեց թվին մահացավ: Նրան մի քիչ հիշում եմ:
– Բանտարկեցի՞ն: Ինչի՞ համար: Ի՞նչ է, կոմունիստների դե՞մ էր:
– Չեմ կարծում:
– Ուրեմն՝ ինչի՞ համար:
– Հենց էնպես:
– Աստվա՛ծ իմ, ինչ վայրենի երկիր է,- տնքաց Լեոպոլդը:- Բացատրի՝ հասկանամ:
– Վախենում եմ՝ չկարողանամ: Դրա մասին տասնյակ գրքեր են գրվել:
Լեոպոլդը թաշկինակով սրբեց աչքերը:
– Ես չեմ կարող գիրք կարդալ: Չափազանց շատ եմ աշխատում: Նա բանտու՞մ է մահացել:
Չէի ուզում ասել, որ պապին գնդակահարել են: Մոնյայի մասին էլ չհիշեցրի: Ի՞նչ իմաստ ուներ…

– Ի՜նչ վայրենի երկիր է: Ես եղել եմ Ամերիկայում, Իսրայելում, շրջել եմ ողջ Եվրոպան…Իսկ Ռուսաստան չեմ գնա: Ինչ կա այնտեղ՝ շախմատ, բալետ ու «սև ագռա՞վ»… Շախմատ սիրու՞մ ես:
– Ոչ այնքան:
– Իսկ բալե՞տ:
– Էնքան էլ գլուխ չեմ հանում:
– Ինչ-որ անհեթեթություն՝ ուրվականներով,- ասաց հորեղբայրս:
Հետո հարցրեց.
– Հայրդ ուզում է գալ այստե՞ղ:
– Հուսով եմ:
– Իսկ ինչո՞վ է զբաղվելու:
– Ծերանալու է: Ամերիկայում նրան փոքրիկ թոշակ կտան:
– Այդ փողով ուզածիդ պես ապրելը դժվար կլինի:
– Կդիմանանք:
– Քո հայրը ռոմանտիկ է: Երեխա ժամանակ շատ էր կարդում: Իսկ ես՝ հակառակը՝ լրիվ առողջ մեծացա… Լավ է, որ մորը դեմ նման: Ես տեսել եմ նրա լուսանկարները: Շատ նման եք…
– Մեզ հաճախ նույնիսկ շփոթում են,- ասացի ես:
Մատուցողը բերեց պաղպաղակը: Հորեղբայրս շշնջաց.
– Եթե փողի կարիք ունենաս, ասա:
– Մեզ հերիքում է:
– Համենայն դեպս, եթե փող պետք լինի, լուր տուր:
– Լավ:
– Իսկ հիմա արի քաղաքը նայենք: Ես տաքսի կվարձեմ…
Հորեղբորս մեջ ինձ ամենից շատ դուր էր գալիս, որ սրընթաց էր տեղաշարժվում: Ու որտեղ էլ հայտնվեինք, անպայման կրկնում էր.
– Շուտով կճաշենք:
Ճաշեցինք քաղաքի կենտրոնում, բաց պատշգամբում: Նվագում էր հունգարական կվարտետը: Հորեղբայրս նրբագեղ ու գեղեցիկ պարեց կնոջ հետ: Հետո նկատեցինք, որ Հելենան հոգնել է:
– Գնանք հոթել,- ասաց հորեղբայրս:- Նվերներ եմ պատրաստել քեզ համար:
Հյուրանոցում, երբ մենակ մնացինք, Հելենան շշնջաց.
– Մի՛ բարկանա: Նա չնայած պարզունակ, բայց բարի մարդ է:

Ահավոր շփոթվեցի: Չգիտեի էլ, որ խոսում է ռուսերեն: Ուզում էի զրուցել նրա հետ: Բայց արդեն ուշ էր:
Տուն վերադարձա ժամը յոթին մոտ: Ձեռքիս ծրարում մեղմ կլկլում էր մայրիկիս նվեր օդեկոլոնը: Փողկապն ու Ճարմանդները դրել էի գրպանս:
Նախասրահը դատարկ էր: Ռեյնհարդը հաշվիչն էր մատնահարում:
– Լինոլեումն ուզում եմ փոխեմ,- ասաց նա:
– Վատ միտք չի:
– Արի խմենք:
– Հաճույքով:
– Բաժակները չեխական հայրենակցականի տղաները տարան: Թղթե բաժակով կխմե՞ս:
– Պատահել է՝ ակնոցի պատյանով էլ եմ խմել:
Ռեյնհարդը հարգալից վեր քաշեց հոնքերը:
Մի-մի բաժակ բրենդի խմեցինք:
– Կարելի է հենց էստեղ էլ քնել,- ասաց նա,- մենակ թե բազմոցները նեղ են:
– Պատահել է՝ գինեկոլոգիական բազկաթոռին եմ քնել:
Ռեյնհարդն առավել հարգանքով նայեց ինձ:
Նորից խմեցինք:
– Լինոլեումը չեմ փոխի,- ասաց նա:- Միտքս փոխեցի, որովհետև աշխարհը դատապարտված է:
– Ճիշտ է,- ասացի ես:
– Յոթ հրեշտակները, որ յոթ փող ունեն, արդեն պատրաստվել են:
Դուռը թակեցին:
– Չբացես,-ասաց Ռեյնհարդը,- դեղնականաչ ձին է… Ու հեծյալը, որի անունն է Մահ…
Նորից խմեցինք:
– Ժամանակն է, ասում եմ,- մայրիկս կանհանգստանա:
– Ողջ եղիր,- դժվարությամբ արտաբերեց Ռեյնհարդը,- չա՛ռ: Եվ կեցցե քունը: Քանզի քունը անգործունեություն է: Իսկ անգործունեությունը միակ բարոյական վիճակն է: Ցանկացած կենսագործունեություն նեխում է… Չա՛ռ…
– Մնաս բարով,- ասացի ես,- կյանքն անհեթեթ է: Կյանքն անհեթեթ է արդեն նրանով, որ գերմանացին ինձ ավելի հարազատ է, քան հարազատ հորեղբայրս…

Ռեյնհարդն ու ես հետո տեսնվում էինք ամեն օր: Անկեղծ ասած՝ չգիտեմ էլ՝ ինչպես հայտնվեց այս պատմվածքում: Խոսքը լրիվ ուրիշ մարդու մասին էր: Իմ հորեղբայր Լեոյի…
Հա՛, լինոլեումը նա, համենայն դեպս, փոխեց…
Լեոպոլդին այլևս չտեսա: Որոշ ժամանակ գրում էինք իրար: Հետո մենք մեկնեցինք Նահանգներ: Նամակագրությունը դադարեց:
Երևի պետք է բացիկ ուղարկել Ծննդյան տոներին…